2024, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (646)

Էջմիածնի Հայրապետական

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Բանակի օրվա առիթով



Բանակի նվիրական օրվա առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Հայոց բանակի հրամանատարներին ու զինվորներին և համայն մեր ժողովրդին:

Արցախյան շարժման օրերից կամավորական ջոկատների և զինապարտների միավորումով կազմավորվեց հայոց կանոնավոր բանակը, որն ավելի քան երեք տասնամյակ, Արցախյան պատերազմների և Հայաստանի սահմաններին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների ընթացքում մարտնչեց անօրինակ սխրանքներով: Բազում քաջորդիներ անմահացան՝ ընդունելով հանուն հայրենիքի նահատակության պսակը:

Սիրելինե՛ր, մեր տարածաշրջանում տիրող բարդ իրադրության մեջ առաջնային է Հայոց բանակի համակողմանի հզորացումը: Մեզ պատած աղետալի ողբերգություններ, Արցախի բռնազավթման հանդիման՝ բոլորիս ջանքերով ըստ ամենայնի պիտի սատարենք մեր բանակին, քանզի Հայոց բանակը երաշխավորն է մեր ժողովրդի խաղաղ ու արժանապատիվ կյանքի, ապահով գալիքի ու հայոց անկախ պետականության: Գոհությամբ ենք հաստատում, որ մեր հոգևոր սպասավորները հովվական խնամքի համար եղել են և լինելու են Հայոց բանակի սպաների ու զինվորների կողքին, որպեսզի զորացնեն ոգին մեր քաջարի մարտիկների և ամուր պահեն նրանց հավատքն ու հույսն առ Աստված:

Այսօր մենք մտահոգ ենք աշխարհում առկա լարված ու պատերազմական իրավիճակի՝ մասնավորապես մեր հայրենիքի շուրջ ծավալվող իրադարձությունների, մեր պետության նկատմամբ դրսևորվող նվաճողական նկրտումների պատճառով: Հավատն ունենք, որ Աստծո օգնությամբ, ուժեղ բանակով և համազգային միաբանությամբ կարող կլինենք դիմակայել մարտահրավերներին և հաստատել մեր պետության և աշխարհաստիպուռ մեր ժողովրդի լուսավոր գալիքը:

Եռաբլուրում՝ հայրենիքի սրբազան հողում ամփոփված մեր նահատակների քաջարի սիրանքը և լույս հիշատակը թող մեզ համար դառնան սրբազան ավանդ՝ անմոռաց պահելու հայրենյաց սերը և նվիրումը, մեր ցավն ու վիշտը դարձնելու ուժ ու վճռականություն՝ հանուն մեր հայրենյաց շենացման ու բարգավաճման:

Բանակի այս նվիրական օրը աղոթում ենք հանուն հայրենիքի զոհված հերոս հայորդիների հոգիների հանգստության համար և հայցում շուտափույթ վերադարձ գերյալ հայորդիներին ու անհայտ կորածներին: Թող Տերը խաղաղ ու անվտանգ ծառայություն շնորհի մեր զինվորներին ու սպաներին և Իր խնամքի ներքո օրհնի ու պահպանի հայրենիքի մեր երկիրը և աշխարհաստիպուռ համայն մեր ժողովրդին այսօր և միշտ. ամեն:

Բանակի օրվա առիթով Սուրբ Պատարագ և Հանրապետական մաղթանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հունվարի 28-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Սուրբ Գայանե վանքում Հայոց բանակի օրվա կապակցությամբ մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Տ. Մովսես վրդ. Սարգսյանը:

Իր քարոզում հայր սուրբը, անդրադառնալով խաղաղության խորհրդին, ի մասնավորի նշեց. «Սուրբ Գիրքը մեզ սովորեցնում է, որ Աստված խաղաղություն է կամենում, սակայն Աստծուն հավատացող մարդիկ են, որ պիտի խաղաղություն հաստատեն՝ անհրաժեշտության դեպքում նաև պայքարելով»:

Ըստ հայր Մովսեսի՝ Սուրբ Եկեղեցին փաստել է, որ հանուն խաղաղության՝ միշտ պետք է պատրաստ լինել պատերազմի ու պատերազմ պետք է մղել հենց խաղաղությունը վերահաստատելու և արդարությունը վերականգնելու համար, որովհետև Աստծո և բարեկամի նկատմամբ սերն ստիպում է քրիստոնյաներին արդարացի խաղաղություն փնտրել, իսկ այդ խաղաղությանը հասնելու համար ամենակարևոր պայմանը բանակն է:

«Սիրելինե՛ր, հանուն խաղաղության ու անվտանգության բազմաթիվ պատերազմներ մղած ու այսօր էլ պատերազմի սպառնալիքներին դիմակայելու պատրաստ Հայոց բանակը տոնում է կազմավորման 32-րդ տարեդարձը, և բանակն է շարունակում մնալ այն միակ ուժը, որը կարող է խաղաղություն հաստատել ու ապահովել պետության անդորրը: Մեր երկրի համար Աստծո պատգամած խաղաղությունը հաստատողն ու պարտադրողը ՀՀ Զինված ուժերն են, իսկ երանելի խաղաղարարները՝ այդ նույն զինված ուժերի հավատացյալ սպաներն ու զինվորները: Տեր Հիսուս Իր կյանքը տվեց որպես խաղաղարար, և սա այն գինն է, որ շատերը վճարեցին մեր երկրում խաղաղություն հաստատելու համար»,— ընդգծեց Մովսես վարդապետը՝ մաղթելով, որ Քրիստոսի սերը, շնորհները ու զորակցությունը միշտ լինեն Հայոց բանակի հետ և յուրաքանչյուր զինծառայողի պարգևեն ամեն վայրկյան խաղաղությունը պարտադրելու կամք ու վճռականություն:

Պատարագի սրբազան արարողության ավարտին, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանի, կատարվեց Հանրապետական մաղթանք, որի ընթացքում հոգևոր դասը և արարողությանը ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված՝ Հայաստան աշխարհի խաղաղության, անսասանության և Հայոց բանակի հաղթական առաջընթացի համար:

Մայր Աթոռի միաբաններն այցելեցին «Եռաբլուր» պանթեոն

Հունվարի 28-ին՝ Հայոց բանակի օրվա կապակցությամբ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններն այցելեցին «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հանուն հայրենիքի պաշտպանության նահատակված հայորդիների հիշատակին և աղոթք բարձրացնելու նրանց հոգիների հանգստության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Քենթրբերիի արքեպիսկոպոսի հետ

Հունվարի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի հայոց թեմ կատարած հայրապետական այցի շրջանակներում հանդիպում ունեցավ Անգլիկան Եկեղեցու առաջնորդ, Քենթրբերիի արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Ջասթին Ուելբիի հետ: Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Արցախից բռնի տեղահանված հայորդիների առջև ծառացած խնդիրներին, գերիների վերադարձման, Արցախի հայկական հոգևոր և մշակութային ժառանգության պահպանման հարցերին և տարածաշրջանում տիրող իրավիճակին:

Արցախին նվիրված համաժողով Եվրոպական Խորհրդարանում

Այս թվականի հունվարի 24-ին Բրյուսելում՝ Եվրոպական Խորհրդարանում, տեղի ունեցավ «Պահպանելով Լեռնային Ղարաբաղի մշակութային և հոգևոր ժառանգությունը» խորագրով խորհրդաժողովը, որը կազմակերպվել էր Եվրոխորհրդարանի նախաձեռնությամբ:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկան Բելգիայի Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, Եվրամիությունում Հայաստանի ներկայացուցչության ղեկավար Տիգրան Բալայանը և Եվրախորհրդարանի պատգամավոր Միրիամ Լեքսմանը:

Ադրբեջանի կողմից հայոց սրբավայրերի թիրախավորման, պատմամշակութային արժեքների ոչնչացման քաղաքականության և այդ ուղղությամբ միջազգային հանրության կողմից ձեռնարկվելիք քայլերի հրատապության մասին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական կենտրոնի տնօրեն և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի բաժնի վարիչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Իր զեկույցում հայր սուրբը կոչ արեց պաշտպանել Լեռնային Ղարաբաղի մշակութային և կրոնական ժառանգությունը, հարգել կրոնի, հավատքի ազատությունը, որն ամրագրված է միջազգային մի շարք պայմանագրերով, ինչպես նաև հնարավորություն ընձեռել ՅՈՒՆԵՍԿՕ-ի անկախ գնահատման առաքելության ներկայացուցիչներին այցելելու տարածաշրջան և փաստագրելու մշակութային հուշարձանների կարգավիճակը:

Խորհրդաժողովին զեկույցներով հանդես եկան նաև Եվրոպա Նոստրա մշակութային ժառանգության պահպանության միջազգային հասարակական կազմակերպության գլխավոր քարտուղար Սնեսկա Քուաեդվիեգ-Միխայլովիչը, «Բնօրան» պատմամշակութային հասարակական կազմակերպության Արցախի մշակութային ժառանգության փորձագետ Արմինե Տիգրանյանը և Լյովենի համալսարանի պրոֆեսոր Պիեռ դ'Արժանը:

Տեղի ունեցավ արևելյան ուղղափառ և կաթոլիկ միջեկեղեցական երկխոսության միջազգային հանձնախմբի ստեղծման հոբելյանական հանդիսությունը



Այս թվականի հունվարի 23-ին Հռոմի Սուրբ Թովմա Ակվինացու անվան քահանայապետական համալսարանի (“Angelicum”) հանդիսությունների սրահում տեղի ունեցավ Արևելյան Ուղղափառ և Կաթոլիկ եկեղեցիների պաշտոնական երկխոսության միջազգային միացյալ աստվածաբանական հանձնախմբի ստեղծման 20-ամյա հոբելյանին նվիրված հանդիսություն, որին մասնակցում էին 2003 թվականից հանձնախմբի աշխատանքներին իրենց նպաստը բերած արևելյան ուղղափառ և կաթոլիկ աստվածաբանները:

Երկու եկեղեցիների միջև պաշտոնական երկխոսությունն ամփոփող զեկույցներով հանդես եկան հանձնախմբի համատեղնապետներ կարդինալ Կուրտ Կոխը (Քրիստոնեական միության խրախուսման բաժանմունքի ղեկավար), հանձնախմբի պատվո համատեղնապետ, գերմանացի նշանավոր աստվածաբան կարդինալ Վալտեր Կասպերը, Ղպտի Եկեղեցու կողմից՝ հանձնախմբի համատեղնապետ Կյուրեղ եպիսկոպոսը (Լոս Անջելեսում Ղպտի Եկեղեցու փոխանորդ-եպիսկոպոս), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ հանձնախմբի անդամ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, և Կաթոլիկ Եկեղեցուց՝ հանձնախմբի նախկին անդամ հայր Ֆրանս Բոուվենը:

Հանդիսավոր արարողության ընթացքում Կաթոլիկ-Արևելյան Եկեղեցիների պաշտոնական երկխոսության և երկու Եկեղեցական ընտանիքների հարաբերությունների զորացմանն ի նպաստ ներդրած ջանքերի համար Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի անունից կարդինալ Կուրտ Կոխը «Բարի արժանիքի» շքանշան («Benemerenti Medal») հանձնեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Վատիկանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ներկայացուցիչ Տ. Խաժակ արք. Պարսամյանին և հայր Ֆրանց Բոուվենին:

Հանդիսությանը, Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, իրենց մասնակցությունը բերեցին նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն և Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Շահե ծ. վրդ. Անանյանը, Կաթոլիկ և Արևելյան Եկեղեցիների միջև երիտասարդ հոգևորականների ճանաչողական փոխայցերի շրջանակներում Հռոմում գտնվող ԳՀԵ-ի կրթական գծով փոխտեսուչ, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Տ. Հուսիկ աբդ. Սմբատյանը, Մայր Աթոռի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի և հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Արարատ քհն. Պողոսյանը և Մայր Աթոռի սոցիալական բաժնի տնօրեն Տ. Մարկոս քհն. Մանգասարյանը:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Տ. Իսահակ վրդ. ՊՈՂՈՍՅԱՆ. ԱՂՈԹՔՆԵՐ

ՁԻՆՎՈՐԻ ԱՂՈԹՔԸ

Քրիստոս Աստված, որ մեր հույսն ես ու ապավենը, Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ՝ երկնային շնորհներովդ լցրու և Քո աներևույթ սուրբ խաչի զորությամբ ամրացնելով՝ պահիր-պահպանիր մեզ երևելի և աներևույթ թշնամիներից, ազատիր բոլոր փորձանքներից ու սատանայի որոգայթներից:

Մարդասեր Աստված, որ Սուրբ խաչիդ զորությունը շնորհել ես մեզ իբրև զենք սատանայի ներգործությունների դեմ՝ փարատելու հիվանդություններն ու ցավերը, ողորմությանդ դուռը բացիր մեր առջև և սուրբերիդ հետ մեզ էլ Քո լուսեղեն հարկերիդ արժանի դարձրու՝ որպես կյանքի գրքում արձանագրված որդեգիրների՝ փրկելով ամեն տեսակ փորձանքներից, արժանի արա հաղթությամբ փառավորել Քեզ, Հորը և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՀԱՅԻ ԱՂՈԹՔԸ

Քրիստոս Աստված մեր, որ Քեզ ապավինողների հույսն ես ու ապավենը, սուրբ և պատվական խաչիդ հովանու տակ՝ խաղաղության մեջ պահիր-պահպանիր և օրհնիր Քո ժողովրդին, մաքրիր մեր միտքն ու խորհուրդները հակառակորդի բոլոր ազդեցություններից, որպեսզի կարողանանք արդարության ճամփաներով քայլել և համարձակությամբ կանգնել քո առջև: Քեզ ենք ապավինում, ով Քրիստոսի մայր և աղախին, բարեխոս եղիր մեզ համար: Մշտնջենավոր Աստված, Անբաժանելի Սուրբ Երրորդություն, որ նորոգում ես հներին և կյանք տալիս մահկանացու մարդկությանը, զորացնում ես քեզ ապավինողներին և երկնային զորությանդ լույսը ծագեցնում աշխարհի վրա, Դու՝ պարգևիչդ ամեն բարիքների և բոլոր հաջողությունների, քո երկնառաք զորությամբ օրհնիր Հայոց տունը, սուրբ խաչիդ զորությամբ ամրացնելով՝ ազատիր բոլոր փորձանքներից ու չարի որոգայթներից, արժանավորիր գոհությամբ փառավորել Քեզ, Հորը և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Պարույր Սևակ — 100



* * *

Իմ նախնիների ազգանվանը սերնդեսերունդ կպած է եղել Տեր-ը, որ հոգևոր դասի տիտղոսն էր: Իմ պապերը սաներն են եղել Էջմիածնի հռչակավոր ճեմարանի, որ տալիս էր, ինչպես որոշակի գիտեմ հիմա, արդի համալսարանի բանասիրական բաժանմունքից ոչ պակաս կրթություն: Նրանք երկհարկանի տուն են ունեցել՝ նկուղով և պատշգամբներով: Բայց 1918—1921 թվականներին մեր գյուղացիք ստիպված են եղել երեք անգամ լքելու իրենց տուն ու տեղը: Եվ եթե իմ պապերի հսկայական գրադարանից մնացել էր միայն «Նարեկը»՝ հրդեհի սպին կաշվե դեմքի վրա և որբացած՝ զրկված ընթերցողից, ապա նրանց երկհարկանի տնից էլ մնացել էր լոկ այն, ինչ չի վառվում՝ գետնափոր նկուղը: Այնտեղ եմ ծնվել ես 1924 թվականի հունվարի 26-ին:

«Անցյալը ներկայացած»

* * *

Իմ գիտակցական ամբողջ կյանքում ես տառապել եմ, եթե կարելի է ասել, կոմիտասասիրությունից:

«Անցյալը ներկայացած»

* * *

Գրել Կոմիտասի մասին հավասարազոր էր գրել հայ ժողովրդի վերջին 100 տարվա պատմությունը՝ ժողովրդի կյանքով ու երազանքներով, կենցաղով ու գոյամարտով, երգերով ու լացով, եվրոպական դիվանագիտությամբ ու թուրքական բարբարոսությամբ, ազգագրությամբ ու ազգագիտությամբ, անցյալով և ապագայով:

«Անցյալը ներկայացած»

* * *

....Այսօր, 16-դարյա մի բարձունքից նայելով, Մաշտոցը մեզ երևում է նախ և առաջ իբրև մի վիթխարի քաղաքագետ, որի շահած անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից և ոչ մեկը:

«Թրի դեմ՝ գրիչ»

* * *

Արդեն միայն Աստվածաշնչի թարգմանությամբ հայոց լեզուն կատարեց իր փառատոնը՝ ապացուցելով, որ ի զորու է լիապես արտահայտելու ինչպես պատմություն, այնպես էլ օրենսդրություն, ինչպես հրապարակախոսություն, այնպես էլ բանաստեղծություն, ինչպես բուսական ու կենդանական աշխարհ, այնպես էլ երևակայություն-տեսիլք և կանխատեսություն-մարգարեության, որովհետև հին եբրայեցոց «Սուրբ գիրքը» իսկապես մի Ամենամատյան էր գիտության և արվեստի բազում բնագավառների:

«Թրի դեմ՝ գրիչ»

* * *

Նա նման չէ նույնիսկ... Արարատին, որ հեռավորության ու միջոցի մեջ նույնպես փոքրանում է:

Նա նման է... հորիզոնի. որքան հեռանում ես իրենից, նույնքան մոտենում է ինքը, և ինչքան մոտենում ես իրեն, այնքան հեռանում է նա՝ մնալով միշտ անհաս և անմատույց, երբեք չփոքրացող և միշտ բացարձակվող: Ուստի և իր հանդեպ մշտարծարծվող մեր զգացմունքը հար և նման է իր իսկ զգացմունքին առ աստված. «ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԵՄ ՈՒ ՉԵՄ ՀԱՍՆՈՒՄ»: Ուստի և նա, ահավասիկ ավելի քան մեկ հազարամյակ, իր երկրպագուների համար մնում է նույնը, ինչպիսին էր իր համար իր երկրպագյալը. «ԱՆՄԱՏՉԵԼԻ ՀԵՌԱՎՈՐ ԵՎ ԱՆԸՆԴՄԻՋԵԼԻ ՄԵՐՁԱՎՈՐ»:

«Գրիգոր Նարեկացի»

* * *

Միայն մի քանի Տաղով Նարեկացին կդառնար մեր առաջին մեծ բանաստեղծը: Բայց նա կերտեց նաև իր «Մատյան»-ը, որը մեր բանաստեղծության Աղթամարա վանքն է՝ լոկ այն զանազանությամբ, որ «Մատյանն» անկործանելի է ստուգապես:

Գրքերն էլ ճակատագիր ունեն, որ բնավ էլ նրանց վերնագիրը չէ: Եվ «Մատյան»-ի ճակատագիրը նույնքան անկրկնելի է, որքան իր էությունն ու հորինվածքը....

Լինելով մեր հին գրականության ամենից շատ հրատարակված և հայ ժողովրդի մեջ ամենատարածված գիրքը, *իր բազմաթիվ վերնագիր-անվանումների փոխարեն կոչվելով պարզապես «Նարեկ»՝ բանաստեղծության այս արտակարգ և անզուգաբախտ հատորը ոչ այնքան ընթերցվել է, որքան համբուրվել, դրվել ոչ այնքան դարակի կամ գրակալի, որքան հիվանդի ճակատի վրա կամ բարձի տակ, ոչ այնքան հասկացվել, որքան զգացվել, ոչ այնքան գնահատվել, որքան պաշտվել:* Եվ զարմանալին այն է, որ Նարեկացին հենց ինքն է դա կանխագուշակել իր գրքի սկզբում. «Այս մատյանն ընթերցողների սրտերը դարձրու հստակ, բժշկիր նրանց հոգիները և հանցանքները սրբիր... Եթե անձնական ցավի մի մահացու վտանգ պաշարի որևէ մեկին՝ թող սրանով գտնի փրկությունը հույսով ապրելու»...

Նարեկացու կանխագուշակումը կատարվեց: Ու եթե ժողովուրդներն իրենց մեծ բանաստեղծներին անմահացնում են համարյա միատեսակ, ապա հայ ժողովուրդը իր այս մեծին անմահացրել է նույնքան արտակարգորեն, որքան արտակարգ էր նույն ինքն այդ մեծը. դարեր շարունակ նրա գիրքը համարվել է ՀՐԱՇԱԼԻՔ, և դարերն ապացուցեցին, որ իսկապես էլ հրաշալիք է դա...

«Գրիգոր Նարեկացի»

* * *

Նրան բնութագրող առաջին ածականը պետք է լինի ԱՍՏՎԱԾԱԽՈՒՅԶԸ: *Բայց նա Աստծուն հետախուզում է ոչ թե պարզապես ի սեր Աստծու, այլ հանուն Մարդու:* Ուստի և նա մեկն է աշխարհիս այն սակավաթիվներից, որոնց մականունն է ՄԱՐԴԱԽՈՒՅԶ: Նա մեր առաջին մարդագիրն է և մեծագույն մարդերգուն: Ուստի և նա, ըստ էության, մեծատառ է գրում ոչ միայն Մարդը, այլև ՈՄՆ-ը: Մեսրոպատառ ոչ մի գրքում մարդն այնքան չի մերկացվել ներքնապես, որքան այստեղ: *Ըստ քրիստոնեական հավատալիքի, Ահեղ Դատաստանի օրը մարդկանց կառուցվածքը շրջվում է, մարմինը դառնում է աստառ, հոգին՝ երես: Իր գրքում այսպես է շրջված ոչ միայն Մարդը, որ ինքն է, այլ նաև Ոմն-ը, որ մարդկային արարածներից յուրաքանչյուրն է:*

«Գրիգոր Նարեկացի»

Ձայնիվ երկրորդ առ տեր կարդամ

Թողություն տուր, Տեր, ծանր Խավարին,
Միայն թե թող Նա թողնի հեռանա:
Թող ծառերն անգամ (առանց և քամու)
Հարգանքով Նրա առջև կեռանան,
Միայն թե թող Նա թողնի հեռանա:
Մենք պահանջ չունենք,
Մենք գոհ ենք նույնիսկ,
Միայն թե թող Նա թողնի հեռանա:
Մենք խոստանում ենք,
Եվ մենք իսկապես
Նրան չենք կարող ու չենք մոռանա,
Միայն թե թող Նա թողնի հեռանա…

Իսկ թե հարկ լինի, նամանավանդ պետք,
Ես Խավարի հետ կմեկնեմ Ինքս՝
Դառնալով Նրա թագավորության
Հին Հպատակն ու նոր Քաղաքացին՝
Անդարձ կմեկնեմ Խավարի հետ ես,
Միայն թե մեր այդ մեկնումից հետո
Ժամանի ինքը՝ Արշալո՛ւյսը,
Գա՛,
Ու եթե մի քիչ տխրի, որ չկամ,
Բայց մի քիչ հետո
Եվ ուրախանա՛, որ իմ կորստով
Կորել է նաև ինքը Խավարը…

Արշալո՛ւյսը գա,
Եվ իր կտրված պորտից պոկվելով՝
Նորածին օրը ալ-կարմիր շնչի
Եվ ինքն էլ զգա,
Որ իր այդ շնչով խոնավ ու տաքուկ
Այնպե՛ս է լցվում աշխարհը կրկին,
Ինչպես տկճորը արնագույն գինով,
Եվ այդ լցումի թրթիռը հսկա
Մանրիկ անցնում է մեր իսկ ներքինով՝
Իբրև մի սարսուռ,
Որ մեզ կապում է անտես կապերով
Աստվածների հետ,
Դարձնում նրանց հետ մեզ հարաբերող,
Բայց և առնչում մեզ օվկիաններին,
Որոնց անվախճան ու տարուբերող
Մակընթացություն-տեղատվությունն
Այլ բան չէ արդեն,
Քան թե աննշան մեր զարկերակի
Նշանակալից արձագանքը մեծ
Մեզնից սկսվող տարածության մեջ…



Պարույր Սևակը Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ

Բարեխոս եղիր իմ և իմ միջև

Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,
Անաղարտ մնամ
Ա՛յն ճահճանման աղտ-աղարտի մեջ,
Որ դժգոհություն բառով է կոչվում:
Դժգոհությունից ես շա՛տ եմ դժգոհ:
Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,
Եվ ասեմ՝ ինչո՛վ.
Բարեխոս եղիր ի՛մ և ի՛մ միջև,
Որ բանն ավարտվի ինքնահաշտությամբ:
Ես խռովել եմ նաև աշխարհից.
Եկ ու վերստին հաշտեցրո՛ւ դու մեզ,
Թե չէ ես այսպես ապրել չե՛մ կարող:
Ուզում եմ նայել ինձ ու աշխարհին
Լիացա՛ծ, ժպտո՛ւն ու գո՛հ աչքերով՝
Հաղթելով և՛ քաղց, և՛ պապակ-փափագ:
Ուզում եմ ապրել անչար ու բարի՝
Գմբեթի ճեղքում բուսած տուղտի պես…
Մի բու թառել է իմ զույգ աչքերին.
Թռցրո՛ւ նրան:
Մի ձու սպիտակ ինձ բիբ է դարձել.
Կորցրո՛ւ այդ ձուն:
Ճանճեր են նստած ինձ վրա
Այնպե՛ս,
Ինչպես քունջութը՝ կաթնահունց հացին:
Ճանճը քունջո՛ւթ չէ.
Հացս չի՛ ուտվում:
Ճանճով է լցված իմ նե՛րսը նաև,
Ինչպես վարսանդը՝ խաշխաշի սերմով:
Խաշխաշ չե՛մ ուզում.
Կակա՛չ դարձրու:
Ասում են, իբր, կապույտի վրա
Չեն նստում ճանճեր:
Լսո՞ւմ ես, Մարիա՛մ,
Ինձ ներս ու դրսից կապո՛ւյտ հագցրու…

Եվ այր մի՝ Մաշտոց անուն

(հատված)

Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում,
Բայց նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,
Որ անչափ շատ են սպասել Նրանց:

Ժողովրդի մեջ ննջում են Նրանք,
Ինչպես ջրի մեջ՝ ահեղ գոլորշին,
Ինչպես ընտանի աքաղաղի մեջ՝
Իր իսկ երբեմնի թռչունությունը,
Ինչպես մանուկի պարապ բերանում՝
Ակռա-ատամը:

Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,
Որպեսզի դառնան նոր զորեղություն:
Նրանք ծնվում են ինչ-որ հանճարեղ մի հոգնությունից,
Որպեսզի դառնան հանճարեղություն:
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե վերջը մի տեղ դառնում է սկիզբ:

Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե հրաշք չկա՛,
Կա միայն կարի՛ք:
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամե՛ն մի հնար...

Հայորդու բարոյատիպը Վոտոմ Յարճանյանի ռազմերգության մեջ

Վոտոմ Յարճանյանի ստեղծագործ հանճարը նույնքան փառահեղ կարող էր լինել խաղաղության արշալույսների օրհներգության մեջ: Ազատության մեջ երբեմն ծաղկող կյանքի տառապագին կարոտի, գեղեցկության վսեմ արարումների, հեռվում թողլքված հայրենական ամուլ դաշտերի պաղատանքի, հորովելի արդար կանչի ստեղծագործ ոգևորությունը որքան էլ այցի գնար նրա բանաստեղծական հզոր տարերքին, հայրենիքի արյան շառագույնը, վերստին խուժելով, տիրական պիտի դառնար նրա պոեզիայում: Կյանքի բանաստեղծական գերզգացողությունն անթեղելով հոգում՝ Յարճանյանն իր հանճարն ընծայաբերեց ազատության պայքարի գաղափարին՝ իրեն ներհատուկ գեղապաշտության պոեզիայի տեղ բերելով ռազմի դյուցազնահեղ ոգին, ազատության համար կյանքով սխրագործելու, ազգային պարտադրվող մահը հերոսացումով հաղթահարելու գաղափարն ու կամքը՝ արարելով բանաստեղծության արժանավայել մի տեսակ՝ ռազմի պոեզիա կամ ռազմերգություն:

Բախտը Յարճանյանին օծել էր բանաստեղծական հանճարով, ճակատագիրը սահմանել էր լինել կոտորածի և մաքառումի բանաստեղծ: Կյանքի փթթուն զգայություններն անթեղած ազգային ճակատագրի ողբերգությունը դարձավ Յարճանյանի ռազմերգության ներքին առանցքը, ազգային գոյաբանության խնդիրը՝ կյանքի գերնպատակը, ջարդերի տեսիլները՝ ներհոգեկան շղթան:

Առաջին գիրքը՝ «Դյուցազնորեն»-ը, ահազանգում էր արիանալու, մաքառելու կամ անզեն, կրավորական նահատակվելու հարցադրումը: Անընդմեջ կոտորածները, պետականության բացակայությունը, թուրք բռնակալության դարավոր լուծը ազգային հոգեկառուցվածքում պատմականորեն ձևավորել էին պարտվողական-կրավորական հոգեբանություն, և «Դյուցազնորեն»-ը հերոսացումի ռազմականչ էր, որ բերում էր սխրագործելու ազգային գիտակցության գաղափարը, կայծի պես բռնկվող հերոսացումներն ու ցեղի դիմադրողականության ներուժը ժողովրդականացնելու հոգեբանությունը, հոգևոր ստրկության փոխարեն դյուցազնորեն կռվելու կորովը: Շարքի գաղափարական հերոսը, որ հանդես է գալու նաև «Հայորդիներ» գրքում, բարոյապես նախանձելի, աստվածավայել հայորդին է, որը պիտի հեղաշրջի ցեղի և երկրի ճակատագիրը: Բանաստեղծի սքանչացումն առ հայորդու բացարձակ նվիրումը, սրբազնագույն ցավն ու աստվածարժան սխրանքը նույնացնում է նրան ասպետի կերպարին:

Բանաստեղծական ճանապարհի սկիզբը խորհրդանշում է «Հույսին ճամբան» բանաստեղծությունը՝ նախանշելով ազգային գոյաբանության մաքառումի ուղին.

Եթե կուզես, Տառապանքը, դարերում համար, քանդակե,
Բայց մի մոռնար, Անոր աչվներն ու բերանը ու հոգին, տարփորեն,
Ընդվզումի ստինքներում կարկառելու…

Ներքին տարածության մեջ բացվում-վերաիմաստավորվում են Հույսը, Ցավը, Տառապանքը, Մահը, Երազը, Դյուցազունը, Արյունը, Եղեռնը, Երդումը: Կերպավորվում են հույսի ռահվիրաները՝ «Ըմբոստացումներու ապառաժներեն իրենց ճակատներն արյունած, // Բայց աչվներեն անասելի արհավիրք մը արձակելով»: Ազգային կենսունակությունը, ֆիզիկական և հոգևոր գոյությունը, ըստ Յարճանյանի, ընդվզումն ու մաքառումն են վճռում, ոչ թե հարյուրամյակների տառապանքն ու հոգևոր ստրկությունը: «Սա փայլակե սուրը կտրիճորեն ձեռքդ առ»,— այս է ազգային կեցության միակ ճանապարհը, որպեսզի վերջապես «…Երազին ձիերը փոթորկանման // Մեր կամքին ձեռվընեներեն դյուցազնաբար վարվելեն՝ // Հաղթանակին կատարները արձանանան…»: Հույսի ճամփան առաջնորդող ընդվզումից, անվերջ կոտորածներից լեռնացած ըմբոստացումից պետք է կռվի-կոփվի ազատությունը. «Թույլ տվեք, որ ձեր ամեն մեկուն պատյանեն մերկացած սուրը պողպատե // Սա մեր քարուտ ու դաժան, ու մութ ու անողորմ ճամփան, // Ծիածանի մը հանգույն մինչև Նպատակը լուսավորե…»:

«Երևակայությունը,— գրում է Դանիել Վարուժանը,— Սիամանթոյի տաղանդին ամենեն տիրական գիծն է… Կիկլոպ մըն է քերթողը. այն սարսափելի աչքը՝ զոր աստված իր լուսեղեն մատով բացած է ըղեղին վրա. թե խոշորացույց մըն է և թե գեղադիտակ մը, որ ամեն բան կը տեսնե հսկայական համեմատությամբ: Երևակայության միացած գաղափարականը՝ հռետորությունը կը ծնի. երևակայության միացած զգացումը կը ծնի վսեմը: Յարճանյանի արվեստը արդյունք է այս երկու զուգավորություններուն»: Կոտորածների հոգեվարքի մեջ Սիամանթոն բերում է ոչ թե մահվան դատապարտվածի հոգեբանությունը, այլ վերածնության կամքը, ոչ թե հոգեբանական պարտությունը, այլ պայքարի հրավերը: Հայրենիքի նահատակների՝ որդիներին ժառանգած սրբությունը իրենց գաղափարն ու գործն է, հայ մայրերն արարում են ազատապաշտ, հայրենազոհ սերունդներ, նահատակված հայրերի վերածնությունը սերունդի պայքարի և նպատակի հաղթանակի մեջ է.

Ո՜վ դուք, որ մեր մարմարե կողերում մայրութենեն ստեղծվեցաք,



Հայկ Նահապետի արձանը, քանդակագործ՝ Կառլեն Նուրիջանյան, դրվագող՝ Գասպար Գասպարյան, 1970 թ.

Ձեր կյանքին առջև փակ աչվները սա լույսերովը ոռոգելեն՝
Խմեցեք նախ այդ արյունեն, որ արյունն է ձեր փառավոր հայրերու,
Ու հետո ամեն օր մեր առույգ ստինքներուն կաթը աստվածային,
Ձեր ամեն մեկը պիտի ըլե այնպես, ինչպես որ ձեր հայրերը մեզի համար
Սա դաշտերուն մեջը անձնուրացորեն եղան…

Սիամանթոն ցեղի ուժի և ցեղի արժանապատվության քերթող է. «Արդարությունը ստեղծել պետք էր և ազատությունը մոլեգնաբար հափշտակել»,— հռչակում է բանաստեղծը: Հույսին համալրում է վրեժը, «Դյուցազնորեն»-ին՝ «Հայորդիները»: Հույսը մշտապես կենսունակ է պահել ազգային կեցության ուղին, վրեժխնդրությունը՝ ազգի գոյաբանության ոգին: Վրեժի մեջ վեհագույն, հոգեբանորեն ազատապաշտ, բարոյապես անձնազոհ հայորդին է Սիամանթոյի պոեզիայի գաղափարակիր հերոսը, հայրենիքի ազատությունը՝ քաղաքական իդեալը, հոգեբանական իդեալը՝ «Քիչ մը լույս, քիչ մը կյանք, քիչ մը սեր և քիչ մը երազ» տառապյալ և խռովյալ սերունդների համար:

Հույսերու երկաթե սանդուխին կատարներեն է, որ ավետիսս կ՚արձակեմ,
Մոխիրներու, դիակներու և վշտերու հովիտներեն է, որ հասա ի քեզ,
Եվ, ավա՜ղ, քղամիդիս թեզանիքներեն իմ շքեղ ցեղիս արյունը ահավասիկ դեռ կը թորա…
Բայց քայլերս անխոնջ են, և կամքս՝ գերազոր, և ձայնս դաժանորեն ամեհի…

«Նպատակն է թելադրում գերագույն պարտականություններ,— ասում է Նժդեհը,— նա պահանջում է ճիգեր ու զոհողություններ, որոնց մեջ կոփվում են անհատի և ժողովրդի լավագույն առաքինությունները, որոնց կատարումը, Աքիլլեսի նիզակի նման, բուժում է իր հասցրած վերքերը»: Յարճանյանի պոեզիայի գաղափարաբանությունը Նժդեհի ուսմունքի գոյափիլիսոփայությունն է. նույն արիապաշտ ոգին, դյուցազնատիպ հերոսը, բացարձակ նվիրումը, նույն գաղափարաքաղաքական դավանանքը. «Ես եմ, Ես եմ, Ես եմ, իմ անունս է Պայքար՝ և վախճանս՝ Հաղթանակ»:

«Ինչ արժե հանճարը,— շարունակում է Նժդեհը,—….երբ իր ցեղի ճակատագրի գերզգացողությունը չունի և չի սնուցաներ իր ցեղի հավիտենականության ձգտումը: Միևնույն չէ, կա թե չկա նմանը, երբ իր շրթունքներին ցեղի խոսքը չէ, և չգիտե վերադաստիարակել, արիացնել ու վարել զանգվածները. երբ անզոր է…. զինվորագրել տալ մի մեծ ու արդար դատի, կարիքի դեպքում իր ժողովրդի ծոցեն շանթանման հերոսներ քամել»: Սիամանթոն իր պոեզիայով հռչակում է սեփական ուժը չճանաչող ժողովրդի ցեղական կորովը, բարոյական անխոցելի ամրությունը՝ մաքառումի վստահությամբ հեղափոխելով անկախություն չունեցող կրավորական նահատակի հոգեբանությունը.

Եվ պաղատանքի, աղոթքի, լաց ու կոծի և ողբի այն մատյաններում մեջ,
Ուր դար առ դար իմ սերունդներս իրենց արյունը և տառապանքն են լացեր,
Մեկ կողմ նետեցի ես զանոնք, պարտութենե ստրկացում և աղաչանքե արցունք չերթալու համար….

Աղաչանքը արցունքի է հասցնում, իսկ պարտությունը դեռ ստրկացում չէ. սա Յարճանյանի պոեզիայի խոհափիլիսոփայության հիմնադրույթներից է: Կորուստներին և ողբերգություններին դիմագրավելու ճանապարհը, ըստ բանաստեղծի, մաքառումն է, դիմադրողականությամբ գոյությունը պաշտպանելու համընդհանուր գիտակցությունը, ընդվզումի անկախ հոգեբանությունը.

Տեսա, որ ձեր փրկությունն մուրացողի բոբիկ ոտքերն ավերակներու մոխիրներեն այրեցան….
Տեսա, որ դուք արցունքի մեջ երջանիկ էիք և կենսաբեր կռիվին դեմ ահաբեկ….

Հզոր երևակայությամբ բանաստեղծելով պայքարի ահեղ ընթացքը՝ Սիամանթոն աստվածացնում է ազգի փառահեղ հերոսներին, որոնք, մահն արհամարհելով, գերմարդկային տառապանքների մեջ՝ կախաղաններին վրա, աքսորավայրերի շղթաներում, հերոսամարտերում, օրհնում են իրենց գաղափարն ու գործը՝ ազգի պատմության և ճակատագրի վրա դրոշմելով իրենց փառահեղ կենսագրությունը. «Հին դյուցազները աշխարհակալներ էին կամ ասպետներ. նորերը, Յարճանյանի հերոսները, հեղափոխականներ են կամ առաքյալներ»,— նկատում է Դ. Վարուժանը:

Սիամանթոն պոեզիա է բերում բարոյական ռազմի չգրված օրենքները: Թշնամին ոճրագործ է. արժանի չէ հայորդու բազկի հարվածին, բայց պետք է կռվի հայորդին, որ իր մեջ կրում է հնագույն ցեղի հոգևոր շաղախը, անկշռելի ցավն ու քրիստոնյա տառապանքը: Արևորդիների, դյուցազունների կամ քաջազունների սերունդն է նա՝ դյուցազնական կռվի օրենքներն արյամբ ժառանգած, տիպարը բոլոր ժամանակների բարոյական ռազմի. «Գլուխս սուգերեն և վրեժեն և ճակատագրեն թեև ալեհեր, // Բայց, տես, աչքերս դյուցազնի մը աչքերուն չափ կարմիր, և կերպարանքս է սոսկատեսիլ…»:

«Անդրանիկ» քերթվածքում հին ու նոր հերոսների՝ Արամ, Տիգրան, Արտաշես, Վարդան, Աղբյուր Սերոբ, Փարյան, Պետո, Ժիրայր, անձնուրացության և արիության ներշնչումով Սիամանթոն իմաստավորում է պայքարի կորովը. «Գիտցիր, որ այս զոհաբերումի, ընդվզումի և հույսի օրերուն, // Մեր ամեն մեկուն համար անկողնի մեջ հոգի տալը վատությունն է վատություններու»: «Որբերու ճակատագրեն», «Բանտերու խորերեն», «Կախաղաններու կատարեն» քերթվածքներում խոսքի վեհափառ տաճարումներով Յարճանյանը կրկին պանծացնում է նվիրական, սրտոտ, պայծառ հերոսների բարոյական զոհողությունների կամքն ու զորությունը: Բանտերի զնդաններում, կախաղանների վրա մահվան գաղափարն ի սկզբանե հաղթահարած այդ հերոսները կործանվում են ինչպես աստվածներ՝ հայրենիքի փրկության ողբերգական վախճանով.

Անոնք, որ օր մը, փառքի օր մը, պատմության օր մը, օր մը հերոսության,
Չարիքին օրենքները պատռեցին արդարության առավոտի մը ի խնդիր,
Անոնք, որ իրենց անձը զոհել ուզեցին գաղափարին խորանին առջևը կանգուն,
Անոնք, որ թշնամիի սուրին դիմաց, մեր կյանքին համար, իրենց սուրը շողացուցին,
Անոնք, որ ցեղին ստրկության շղթաները, ցեղին ուսեն՝ իրենց ուսերուն վրա վերցուցին…

Օրհներգությանը հաջորդում են հերոսների տարերային ուժի, անմահության խորհրդի պատկերային գյուտերը: Հերոսների հոգեվարքի համար է սահմանվել երկնակամարի լույսը, նրանց բռունցքներում կայծակներ կան ծրարված, աչքերում՝ աստղեր, հերոսները մահամերժ ներկայություն են.

Հսկաներ դուրս կ՚աշտանակվին, անընկնելի և շքեղ և անվեհեր,
Իրենց ըմբոստի ուսերեն առկախ երկաթները ազատարար զանգերու պես մեկզմեկու ընդհարելեն…
Դեպի ստույգ մահը կը քալեն, ցեղին ցավովը սպառազեն և մոտավոր մահեն զորավոր…

Ժողովուրդը իր հերոսների գործի գիտակցությունը պիտի ունենա, նրանց նվիրումը սրբագործելու առաքելությունը ստանձնի. հերոսներին գնահատելու և նրանց հանդեպ պատասխանատվության մեջ է ժողովրդի բարոյականը: Բանաստեղծի համոզմամբ՝ հերոսներին ուրանալն ազգային բարոյականության անկում է: «Երկար դարեր մեր պատմությունը չէր արձանագրել մի շրջան, ուր այնքան հերոսներ իրենց կյանքը երկյուղածորեն պատարագեին իրենց ժողովրդի փրկության գործին, բայց չի եղել և մի շրջան, ուր հայության որոշ խավերը այնքան ապերախտ գտնվեին սեփական ժողովրդի ազատագրական փոթորկումների հանդեպ»,— գրում է Նժդեհը: Նժդեհից առաջ նույն ողբերգական տագնապով Սիամանթոն բանաստեղծում էր.

Բայց ո՞վ էր, որ պիտի ողբար քո բարոյականդ, ո՞վ խավարի և ավերի ժողովուրդ,
Դուն, որ դահիճներուն առջև կը ծնրադրես և հերոսներուն համար պսակ հյուսել չես գիտեր…
Եվ ո՞վ պիտի բերե իդեապաշտության մրրկոտ ջահը, քո կյանքի ճանապարհին վրա, հերոսաբար սարսելու…
Եթե ոչ Հայորդին, որուն հստակ մտածումը, Արևմուտքին իդեալները ձեր դիմաց ապարդյունորեն ցոլացուց…

➥ էջ 6, 8

Գարեգին Նժդեհի խոհերը բանակի մասին

* * *

Զինվորի համար կռվի ժամանակ դրոշակը, ազգը, հայրենի երկիրը և նրա սրբությունները խորհրդանշողը իր առաջնորդն է. ահա՛ թե ինչու կատարյալ առաջնորդը միշտ էլ իր զորքերի հետ է, նրանց կողքին և նրանցից առաջ: Նա ռազմարվեստագետ է և ոչ զինվորական արհեստավոր: Վերջապես, նա ընկերն է իր զինվորի:

* * *

Ամեն մի առաջնորդ այնքան է պահանջում իր զինվորներից, որքանի ընդունակ է ինքը: Միայն այնքան անվեհերություն և անձնազոհություն, որքանի ընդունակ է ինքը, և ո՛չ ավելին: Եվ ուր վերջանում է լավ առաջնորդը, այնտեղ սկսում է վատ զինվորը:

* * *

Իսկական առաջնորդը շատ անգամ չի նշանակվում, նա երևան է գալիս, երբ նրա կարիքն է զգացվում, նա հայտնվում է վտանգի ժամանակ:

* * *

Կատարյալ առաջնորդը նախ հոգեբանորեն ստեղծում է իր բանակը՝ տալով նրան իր հոգին:

* * *

Զորքը եթե ոչ առաջին, ամենաուշը երկրորդ օրը բնազդաբար ճանաչում է իր առաջնորդին: Նա շատ շուտ է տարբերում «մեծ»-ը «փքված»-ից: Նա հարգում է գիտակցական կարգապահությունը, բայց չի սիրում պաղ և անհոգի պաշտոնականությունը: Նա ուզում է, որ իր առաջնորդը լինի ավելի սրտի մարդ և, ամենագլխավորը, նաև զինվոր: Եվ այդպիսին է կատարյալ առաջնորդը. նրան պաշտում են, բայց չեն վախենում նրանից և չպիտի վախենան:

* * *

Կառավարելու մի հատիկ միջոց ունի նա՝ խոսքը, խիստ, բայց ընկերական, խոսքը՝ երբեմն որպես սանձ և միշտ էլ որպես խթան: Նա կառավարում է անձամբ, արհամարհելով ճանապարհը մատով ցույց տվող ղեկավարին: Խիստ է, բայց ոչ կոպիտ: Հպարտ է, բայց ոչ փառասեր: Պարզ է, չարքաշ, անշահասեր:

* * *

Ռազմավարի հանճարը բխում է իր հոգու վեհությունից:

* * *

Որոնք են լինելու վաղվա Հայաստանի սահմանները:

– Անոնք, որ պիտ գծեն հայ զինվորի արիությունն ու հայրենասիրությունը:

* * *

Կռվադաշտում նմանիր առյուծին, որը քնում է բաց աչքերով:

* * *

Կռվում ճանաչիր մի հատիկ սահման՝ անկարելին:

* * *

Էապես ոչինչ է անում այն ժողովուրդը, որն իր նյութական զենքերի հետ միաժամանակ չի կատարելագործում նաև իր զինվորը:

* * *

Լավ բան է, անշուշտ, մի հատիկ զենք ավելի ունենալ, բայց ոչինչ բան է հազարներով իսկ ավելի ունենալը, եթե ռազմիկին վարողը մահվան գաղափարի հետ հաշտված հերոսական ոգին չէ:

* * *

Կենսաբանորեն անբարոյական է այն ժողովուրդը, որի մեջ զինվորը ներքին թշնամիներ ունի:

* * *

Զենք կրել չի նշանակում ճշմարիտ զինվոր լինել: Զենքը չէ մարդուս զինվոր դարձնողը: Կա մի այլ բան – ոգին, մարտական խմորը, արիությունը, հայրենի հողի զգացումը, սրբության զգացումը, իր կյանքից ավելի իր դրոշակը սիրելու և նրա համար ամեն վայրկյան մեռնելու հոժարանքը:

* * *

Առաջինը եղիր հարձակման, վերջինը՝ նահանջի ժամանակ:

* * *

Բավական չէ իր Ազգի զավակը լինել, պետք է նաև նրա հրաշունչ զինվորը լինել:

* * *

Անկրոն էակը հրաշունչ զինվոր չի դառնա:

* * *

Ամեն հայ ընդունակ է մարտիրոսանալու, իսկ ամեն մարտիրոս կարող է հերոս լինել:

* * *

Վայ այն զինվորին ու զորքին, որն իր ղեկավարների աչքերի մեջ բոց, շարժումների մեջ՝ վճռականություն, սրի ծայրին շանթ չի տեսնում. դատապարտված է նա:

* * *

Բարոյական ուժն է գոտեպնդում փոքր ժողովուրդներին ու բանակներին անհավասար կռվում. նա է դեպի հաջողություն ու հաղթանակ առաջնորդում թվապես թույլերին՝ մեծ, մեծամեծ հակառակորդների դեմ:

* * *

Միայն արին, քաջը, միայն հերոսը կարող է զոհաբերել:

* * *

Ժողովուրդները չեն պարտվում, եթե չեն ուզում պարտվել:

* * *

Վաղը հաղթելու է նա, որ մինչ այդ վաղը իր հոգու մեջ կտանի հաղթանակը:

* * *

Կռվի ժամանակ զինվորն ավելի շատ բարոյական մենակությունից է վախենում, քան մահից:

* * *

Զորակա՛ն, կռվիր այնպես, որ կարողանաս ասել զենքի ընկերներիդ՝ ինձ պես կռվեցեք:

Արդարությունը

«Որովհետև մեր պարծանքը սա է՝ մեր խղճմտանքի վկայությունը....»:
(Բ Կորնթ. 1.12)

«Արդարի արդարությունն իր վրա է ընկնելու, անօրենի արդարությունը՝ իր վրա»:
(Եզեկ. 18.20)

Հոբ Արդարը

Արդարությունը (հունարեն՝ «δικαιοσύνη», ճշմարտություն, օրինականություն), ամեն բանից զատ, նախ հոգեվիճակ է, յուրաքանչյուր պարագայում և ամեն բանի նկատմամբ արժանին հատուցելու մղումն ու ճշմարտությամբ ապրելը. «Բայց ասում եմ ձեզ, որ եթե ձեր արդարությունը ավելի չլինի, քան օրենսգետներինը և փարիսեցիներինը, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. 5.20, հմմտ. Սաղմ. 10.7, 85.2, Առակ. 12.5), ուրիշ խոսքով՝ նենգությունից, կեղծավորությունից, հիշաչարությունից, մարդահաճությունից, փառասիրությունից, շահասիրությունից, կողմնակալությունից և այսօրինակ վարք ու բարքից հեռու մնալը (երբ մարդու արտաքին վարքագծի և ներքին հոգեվիճակի միջև ընդգծված անհամապատասխանություն կա), ինչպես ընթերցում ենք Աստվածաշնչում. «Նա, ով ագահ է շահի համար, աղետ կբերի իր ընտանիքի վրա, բայց նա, ով ատում է կաշառքը, կապրի» (Առակ. 15.27), «Ագահը կռիվ է հրահրում, բայց նա, ով ապավինում է Տիրոջը, կհաջողի» (Առակ. 28.25), «Չարը պարծենում է սեփական կրքերով, անիծում և նախատում է Տիրոջը» (Սաղմ. 9.24): Ինչպես նաև՝ «Վա՜յ նրանց, ովքեր.... նվերների համար արդարացնում են մեղավորներին և զրկում արդարին....» (Ես. 5.22–23): Այսօրինակ հորդորների հանդիպում ենք Հին և Նոր Կտակարանների մի շարք գրքերում (Բ Պետ. 2.15, հմմտ. Ա Տիմոթ. 6.9–10, հմմտ. Սաղմ. 26.9–10, Ելք 23.8, Բ Օր. 10.17). «Նա, ով քայլում է արդարությամբ և ասում է ճշմարտությունը. ով արհամարհում է կեղեքման շահը.... նա կբնակվի բարձրության վրա....» (հմմտ. Ես. 33.15–16): Իսկ Պողոս առաքյալը, ավելի հեռու գնալով և մեջբերելով մարգարեի խոսքերը, ասում է. «Չկա արդար և ոչ մեկը.... Բոլորն էլ միասին խոտորվեցին և անպետք դարձան....» (Հռոմ. 3.10–18):

Իրավափիլիսոփայության և սոցիոլոգիայի դիտակետից՝ արդարությունը կամ արդարադատությունը բազմաբովանդակ հասկացություն է, բայցև իրավիճակային լավագույն հետևանք ու ելք: Գիտական նշանակության առաջին կարևորագույն տեսությունը հույն նշանավոր իմաստասեր Պլատոնի «Պետություն»-ն է: Աստվածաբանության տեսակետից՝ արդարությունը մարդու արտաքին և ներքին հոգեկան համերաշխ վիճակն է, երբ հոգու, մտքի և մարմնի բոլոր ուժերը կենտրոնացած են Աստծուն հաճելի կենցաղավարությանը: Աստված միշտ գործում է «Բարու» շրջանակներում և նույնն էլ ակնկալում է բանականներից: Ենոքն իր արդարության համար Աստծու կողմից կենդանի տարվեց երկինք (հմմտ. Ծննդ. 5.21–24, Եբր. 11.5), «Աբրահամը հավատաց Աստծուն, և դա նրան արդարություն համարվեց» (հմմտ. Հռոմ. 4.18–25), կամ՝ «Արդարությունը բարձրացնում է ազգը, բայց մեղքը ազգեր է նվազեցնում» (Առակ. 14.34):

Հայտնի է, որ երբ Սամուել մարգարեն ծերացավ, իր որդիներին Իսրայելի վրա դատավորներ կարգեց: Նրա որդիները, սակայն, չգնացին իրենց հոր ճանապարհով, այլ «ընչաքաղցության հետևից ընկնելով՝ կաշառք էին վերցնում և իրավունքը թյուրում» (Ա Թագ. 8.1–3): Աստվածաշնչում անարդարության և դիցուք՝ «կոռուպցիայի ամենահայտնի օրինակներից մեկը» Զաքեոսի պատմությունն է: «Ես իմ ունեցվածքի կեսը կտամ աղքատներին, և եթե որևէ մեկին որևէ կերպ անիրավություն եմ արել, նրան քառապատիկ կհատուցեմ»,– հայտարարում է նա, երբ արժանանում է Հիսուսի ուշադրությանը, որին ի պատասխան՝ Հիսուս հռչակում է. «Այսօր փրկությունը եկավ այս տանը.... որովհետև մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածը» (հմմտ. Ղուկ. 19.1–10):

Դարձյալ այս մասին են Աստվածաշնչում տեղ գտած «Անիրավ տնտեսի առակը» (Ղուկ. 16.25), Հուդայի մատնության մասին պատմությունը (Մատթ. 26.14–16), «Փարիսեցու և մաքսավորի» առակը (Ղուկ. 18.9–14), «Սիմոն մոգի մասին պատմությունը» (Գործք 8.18–20): Ուստի ամեն անգամ, երբ հպարտությամբ տոգորված մարդն իրեն աստվածային իշխանություն է վերապահում, իսկ Աստծու օրենքի փոխարեն՝ անձնական կամայականություն, առաջ է գալիս անարդարություն և «բարոյական կոռուպցիա»:

Արդարության ստույգ ըմբռնման բացակայության պատճառով ոմանք չեն կարողանում հասկանալ, թե գործնականում ինչպես վարվել (Հռոմ. 2.15,16), մյուսները մարդկային անկյալ, անկատար վիճակում, գերի լինելով կրքերին, խախտում ու խաթարում են արդարության մասին պատկերցումները (Ես. 5.20, Սիր. 9.4, Հոբ 14.4): Այսպես՝ «արդարության» ազնիվ գաղափարը փոխարինվում է, օրինակ, «հավասարության» մասին սին ու անառողջ ուսմունքով: Նրանք, ովքեր կարծում են, թե բացարձակ հավասարության մասին ուսմունքն արդարադատ է, եթե չեն տառապում տգիտությամբ, ըստ էության, թաքցնում են իրենց վարքի իրական դրդապատճառները, նույնպես և նրանք, ովքեր պահանջում են, որ ոչ ոք չպետք է ունենա ավելին, քան մյուսները: Այսպիսիներին Աստվածաշունչը հստակորեն պատգամում է. «Եթե ձեր սրտերում դառը նախանձ և եսասիրական փառասիրություն ունեք, մի՛ պարծենաք և մի՛ ստեք ճշմարտության դեմ» (Հակ. 3.14): Նույն կերպ, օրինակ, երբ դատավոր կամ ղեկավար կամ իշխանություն ունեցող մեկը ոմանց խստորեն դատապարտում է, իսկ ուրիշների, ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված, մեղմ է մոտենում, երբ ոմանց առանձնացնելով՝ բարեհաճ վերաբերմունքի է արժանացնում, իսկ ոմանց նկատմամբ անբարյացակամ է, կողմնակալ, անարդարադատ: Իսկ եթե բոլոր դեպքերում և բոլորի նկատմամբ էլ իրեն դրսևորում է «անաչառ կերպով», ապա բացահայտ կեղծավոր է:

Անարդարությունը իշխանությամբ օժտված որևէ մեկի կողմից անհատի կամ խմբի նկատմամբ ցուցաբերվող աջակցությունն է, որը, որպես կանոն, հիմնված է անձնական շահի կամ սուբյեկտիվ դատողության վրա, բայց ոչ երբեք օբյեկտիվ կամ պատճառաբանված չափորոշիչների: ➥ էջ 7

Աստուծոյ Օրէնքներուն եւ պատուիրաններուն մասին

Սկիզբը՝ 2023 թ. դեկտեմբեր Բ, 2024 թ. հունվար Ա համարներում

Տասներորդ հարցում. *Մովսիսական օրէնքի իններորդ հրամանի մասին:*

Իններորդ հրամանը այս է. ընկերոջդ կնոջ մի՛ ցանկար:

Աստուծոյ օրէնքն ու մարդկային օրէնքը իրարմէ տարբեր են, որովհետև Աստուծոյ օրէնքը կ'արգիլէ նաեւ սիրտին [չարութիւն խորհիլ]. իսկ մարդկային օրէնքը կ'արգիլէ ձեռքին: Քանի որ մարդը երևելի է, [ապա] յայտնի, երևցած գործերը կը դատէ, սակայն Աստուած աներևոյթ է, որով հոգիին խորհուրդն ալ կը դատէ, ինչպէս այս պատուիրանին մէջ յայտնի կը դառնայ:

Մարդկային օրէնքները մինչև չարութիւնը կատարուած չտեսնեն, չեն կրնար սիրտն ու խորհուրդը դատել, սակայն Աստուծոյ առջև մարդուն կամքը, կամեցողութիւնը կատարեալ, կատարուած գործ կը համարուի: Ինչպէս ըսաւ Քրիստոս, թէ ով որ ցանկութեամբ կը նայի կնոջ մը, արդէն իսկ իր սիրտին մէջ շնացած կ'ըլլայ անոր հետ, այդ պատճառով հրամայեց. ընկերոջդ կնոջ մի՛ ցանկար: Որովհետև Աստուած ցանկութեան որպէս դեղ եւ անոր պատճառած որդեծնութեան հրաման տուաւ ամուսնանալ, բայց աւելորդ ցանկութիւնը օտարներուն արգիլեց, որպէսզի մարդ իր կինն ու օտարը ճանչնայ, որպէսզի անասուններէն տարբերի: Քանի որ ինչպէս արդար վաստակը հրամայեց եւ գողութիւն ընել արգիլեց, այսպէս ալ մաքուր, անարատ ամուսնութիւն հրամայեց եւ ուրիշներու կիներուն ցանկալը արգիլեց: Որովհետև ինչպէս որ մարդ չուզեր, որ ուրիշ մարդ մը իր կնոջ ցանկայ ու աչք նետէ անոր վրայ, այդպէս ալ ինք պէտք չէ աչք նետէ ուրիշներու կիներուն, որ չար ագահութիւն է:

Դարձեալ՝ ինչպէս ծառը արմատէն կը բողբոջի ու կը ծլի, այդպէս ալ շնութիւնն ու կատարուած գործը սիրտի ցանկութենէն կը զօրանան եւ կը կատարուին. իսկ ցանկութիւնը այլևս հնարաւոր չըլլար արգիլել: Արդարև, մարդ պէտք է զսպէ իր աչքը, որպէսզի պատուհանէն, դռնէն գողը [ցանկութիւնը] տուն չմտցնէ, քանի որ մարդուն աչքը հոգիին ու սիրտին դուռն է, եւ այս դռնէն մահը հոգիին մէջ կը մտնէ:

Այս ցանկութիւնը երեք բանէ կը յառաջանայ:

Նախ՝ սատանային քէֆ տալէն, պատճառելէն:

Երկրորդ՝ մարմնի հեշտութենէն:

Երրորդ՝ միտքի եւ կամքի հաւանութենէն:

Առաջինին համար առաքեալը կ'ըսէ, թէ հակառակեցէք սատանային, եւ ան կը փախչի ձեզմէ:

Երկրորդին համար կ'ըսէ, եթէ մարմնի հաճոյքներով ապրիք, հոգիով պիտի մեռնիք:

Երրորդին համար կ'ըսէ. մարմնականը խորհիլը մահ է: Որովհետև ցանկութիւնը յղանալով՝ մեղքը կը ծնի, իսկ մեղքը, երբ իր կատարումին հասնի, մահ կը ծնի:

Արդ, թէեւ ցանկութիւնը յատկապէս սիրտին համար կ'ըսուի եւ սիրտէն է, սակայն աչքերու ցանկութիւն ալ կայ, ինչպէս արգիլուած են գեղեցիկները [պոռնիկները, անբարոները]:

Ականջներու ցանկութիւն կայ, ինչպէս գարշելի խաղերն ու բոլոր տնաւեր խօսքերը:

Բերանի ցանկութիւն կայ, ինչպէս անուշահամ կերակուրները եւ տռփական գարշելի խօսքերը:

Հոտոտելիքի ցանկութիւն կայ, ինչպէս իգացուցիչ իւղերը:

Իսկ հիմա՝ հիւանդութիւններու մասին ըսելէ ետք, դեղերու մասին ըսենք:

Նախ՝ օտար կնոջ տեսութենէն պէտք է փախչիլ, ինչպէս Ղովտը Սոդոմէն փախաւ:

Երկրորդ՝ թոյլ չի տալ որ չար խորհուրդները սիրտէն ներս մտնեն, քանի որ ծուռ խորհուրդները մարդս Աստուծմէ կը բաժնեն:

Երրորդ՝ աղօթքի ժամանակ յատկացնել, քանի որ Աստուած է, որ մարդս կը պահէ մեղքերէն. ինչպէս նաեւ իմաստութիւնը եւ մաքուր խղճմտանքը:

Չորրորդ՝ պահքով եւ ծոմով, որովհետև ցանկութիւնը չի՛ կրնար մտնել այն մարդուն սիրտը, որ պարսպուած կ'ըլլայ աղօթքով, պահքով եւ ծոմով:

Հինգերորդ՝ զբաղիլ կարդալով եւ այլ բարի զբաղմունքներով, որպէսզի սատանան պարապ ժամանակ չգտնէ մարդուն մէջ՝ զայն փորձելու համար:

Ցանկութիւնը սերաստէս օձ է [կերաստէս, եթովպական եղջիւրաւոր օձ],

որ նայելով կը սպաննէ.

ով որ կ'ուզէ ազատիլ, անմիջապէս աչքերը ետ թող դարձնէ [չնայի]:

Տասնմէկերորդ հարցում. *Մովսիսական օրէնքի տասներորդ հրամանի մասին:*

Տասներորդ հրամանը այս է. ընկերոջդ տան մի՛ ցանկար, ինչպէս նաեւ անոր այգիին, ծառային, աղաւնիին, եզին, էշին, նաեւ անոր բոլոր անասուններուն մի՛ ցանկար, եւ ո՛չ ալ այն բոլոր բաներուն, որ քու ընկերոջդ են:

Մարդուն կենդանի եւ բանական տունը իր կինն է. անկենդան տունը՝ իր բնակարանը: Արդարև, քանի որ նախ կենդանի տան



Ռեմբրանդտ. Մովսեսը տասը պատվիրաններով, 1659 թ.

եւ կնոջ համար ըսաւ չցանկալ, հիմա՝ հրամանի վերջաւորութեան, անկենդան եւ բնակարան տունին համար կ'ըսէ: Որովհետև իմաստունները կ'ըսեն, թէ մարդուն սիրտն ու աչքը անկուշտ են. մարդուն սիրտը միայն Աստուած կրնայ լեցնել, իսկ մարդուն աչքը՝ ափ մը հողը:

Արդարև, մարդ պէտք է օտարի դրամին ու ունեցուածքին չցանկայ. թէ՛ կայուն՝ որ տունն է, թէ՛ գնայուն, որ ծառան է, աղախինն է, եզն ու էշն են:

Որովհետև Ս. Պօղոս կ'ըսէ, թէ անոնք, որոնք մեծնալ կը ցնական, փորձութեան կը հասնին եւ սատանայի որոգայթներուն կը մատնուին: Քանի որ երբ մարդ շատ բաներու տէր ըլլայ, իր ազատութիւնը կը կորսնցնէ եւ իր ինչքերուն գերի կ'ըլլայ եւ կը մատնուի հոգերու ու կասկածներու: Այն հարուստ մարդուն նման, որ կ'ըսէր՝ շտեմարաններս պիտի քակեմ եւ անոնց փոխարէն աւելի մեծերը պիտի շինեմ. անոր ըսուեցաւ, թէ՝ անմի՛տ, այս գիշեր իսկ հոգիդ քեզմէ պիտի պահանջեն, այդքան հաւաքածդ որո՞ւ պիտի ձգես:

Եսայի մարգարէն այսպիսի ցանկացողներուն վայ կու տայ, ըսելով. վա՛յ անոնց, որոնք տունին տուն կը կցեն, որպէսզի ընկերոջ ունեցածն ալ յափշտակեն [տես Ես. 5:8]: Այսպէս ըրին Աքաաբն ու Յեզաբէլը, որոնք Նաբովթի այգին յափշտակեցին [տես Գ. Թագ. 21:1–16]. տես, թէ ինչպէս պատժուեցան, երկուքին արիւնն ալ շուները լիզեցին [տես Գ. Թագ. 22:38]: Իսկ Եւդոկսիա թագուհին, որ այրի կնոջ այգին քաշեց անոր ձեռքէն, ամբողջ երեսուն տարիներ անոր գերեզմանը երերաց. հետևաբար, տես, թէ ցանկութիւնը ի՜նչ գէշ բան է:

Օտար դրամի մի՛ ցանկար եւ անշէջ հուրով մի՛ այրիր.

օտար դրամով չէս յագենար, այլ՝ չար ցանկութեամբ կը մաշիս:

Տասներկրորդ հարցում. *Աստուծոյ եւ ընկերոջ սիրոյն մասին, որ օրէնքներու լրումն է. եւ Քրիստոսէ՝ հիներով նոր նորոգուած:*

Օրէնքներու եւ պատուիրաններու պսակը, թագն ու գերազանց լրումը զԱստուած սիրելն է: Ըստ առաքեալին, թէ օրէնքներու լրումը սէրն է. սուրբ սիրտէ եւ բարի միտքէ ու անկեղծաւոր հաւատքով սիրել զԱստուած՝ իրեն համար. իսկ ընկերը սիրել՝ Աստուծոյ համար, եւ առ Աստուած եւ Աստուծմով, այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ օրէնքն ու մարգարէները: Որովհետև տասը պատուիրաններէն երեքը գրուած էին մէկ տախտակի վրայ, Աստուծոյ կը վերաբերէին, որոնք հետևեալներն էին.

ա. Կուռքեր չշինել:

բ. Զուր տեղ Աստուծոյ անունը չգործածել:

գ. Շաբաթ օրը սուրբ պահել:

Իսկ մնացեալ եօթը պատուիրանները, որ երկրորդ տախտակին վրայ գրուած էին, ընկերը սիրելուն կը վերաբերէին:

Տակաւին, Սուրբ Պօղոս առաքեալը բոլոր պատուիրանները կը վերաբերէ զԱստուած սիրելուն, ըսելով թէ՝ բոլոր պատուիրանները մէկ բանով կը կատարուին՝ զԱստուած սիրելով, քանի որ ընկերը Աստուծոյ համար պէտք է սիրենք:

Արդ, պարտաւոր ենք զԱստուած սիրել ամբողջ սիրտով, այսինքն՝ իմացականութեամբ՝ առանց սխալելու հաւատալիքներու մէջ: Ամբողջ անձով, այսինքն՝ կամքով՝ առանց ներհակութեան: Եւ ամբողջ միտքով, այսինքն՝ յիշողականութեամբ ու առանց մոռացումի, որովհետև յաճախ Աստուծոյ բարերարութիւններուն յիշումը մեզ զԱստուած սիրելուն կը տանի: Իսկ Աստուծոյ նախկին բարերարութիւնը՝ յաւիտեաններէն մեզ ստեղծել նախասիմանելն էր:

Երկրորդ՝ ժամանակի ընթացքին ստեղծելը:

Երրորդ՝ ըստ Հոգիին մեզ Իր պատկերով ստեղծելը:

Չորրորդ՝ սկզբնական արդարութեամբ եւ շնորհքով զարդարելը:

➥ էջ 8

Հայորդու բարոյատիպը Վոռոմ Յարճանյանի ռազմերգության մեջ

➥ էջ 4

Իր ժողովրդին արժանի հերոսների և իր հերոսներին արժանի լինելու ժողովրդի բարոյականն է հռչակում Սիամանթոն՝ գաղափարի արժեկշռով արծարծելով հերոսականը, արիականը համընդհանրացնելու, ժողովրդի հոգեբանությունը վերանորոգելու, ազգային անկումի տիրական հոգեվիճակը բեկելու մտայնությունները.

Ո՞ւր են ուրեմն, ո՞ւր են մեր բազուկները, մեր կամքերը,
մեր մուրճերը, մեր հարվածներն ազատաբեր,
Ո՞ւր է մեր սերը, ո՞ւր է մեր խիղճը, մեր վազքը, մեր զայրույթը շանթածրար,
Եվ ե՞րբ, ե՞րբ պիտի վար շրջենք, ե՞րբ պիտի խորտակենք,
ե՞րբ պիտի փշրենք
Մահվան դուռներն այդ բանտերուն, երթալ հափշտակելու,
երթալ համբուրելու համար,
Այդ հավիտենական հերոսները, որոնք մեր կյանքը իրենց
կյանքեն անհունապես ավելի սիրեցին…

Մերկացնելով մեծ տերությունների աշխարհաքաղաքականությունը՝ Սիամանթոն կոչ է անում ժողովրդին՝ հայացքն ուղղել դեպի իր ներսը՝ սեփական փրկությունը սեփական ուժի մեջ որոնելու պատմական ճշմարտության իմաստնությամբ.

Իրենց բարի ժպիտը կեղծ էր, իրենց խոստումը՝ մահաբույր, և նայվածքնին՝ ծածկամիտ,
Իրենց բուրվառին մեջ մեր արյունն էր, որ խունկի փոխան կը ծխար…
Իրենց սկիհը մեր արցունքովը լեցված էր, և այն հացը զոր ձեր առջև նետեցին,
Մեր թշվառության և մեր տառապանքին վարձատրության արժեքն էր անգութ…

«Հայրենիքին կողը նոր հերոսներու երկունքեն կը սարսռա»,– հիացմունքի երկյուղածությամբ իր պատկառանքն է բանաստեղծում Սիամանթոն՝ երիցս օրհնաբանելով պայքարի հերոսներին՝ «Կեցցե՛ն Ըմբոստները, և կեցցե՛ Հայաստան», և երիցս ատելությամբ խարանելով դավաճաններին՝ «Մեռելներ կան, որ պետք է անգամ մը ևս մեռցնել»: Մաքառումի գիտակցությանը զուգակշիռ՝ բարձրանում է նպատակի հաղթանակի վստահությունը՝ որպես պայքարի առաջնորդ հոգեբանական ներուժ: Ապագայի անխառն ոգեշնչվածությամբ բանաստեղծը ձոներգում է. «Մեր ճշմարիտ սուրը և մեր Դրոշը պիտի ապրին, որովհետև կամքերնիս կարմիր է, և վրեժնիս՝ անպարտելի: // Մեր սուրը պիտի ապրի, կյանքն ստեղծելու ու գաղափարին գահ մը կառուցանելու համար»՝ իր պատկառանքն արտածելով մաքառող հերոսների հանդեպ. «Նախանձությամբ ու տարփանքով հողին վրա ծնրադիր՝ // Իրենց հերոսի քայլերուն հետքը երկյուղածորեն համբուրեցի…»:

Բարոյական ռազմի կարկառուն քերթվածք է «Կովկաս» բանաստեղծությունը՝ «Նվեր կովկասահայ ընկերներուս» ընծայականով: Կործանվող հայրենիքը, կոտորածների մղձավանջը, սրածվող սերունդների արյան աղաղակը հատուցում են պահանջում, ազգային կեցվածքի հեղափոխում, անարգվող ցեղի վրեժխնդրության ցասում: Միմիայն հայորդու կամքը և ուժը կարող են վերածնել հոգեվարքի հասցված հայրենիքը: Կոտորածների համապատկերին ձուլվում է վրիժավառ ոգիների հերոսացումների ասպետական ուղին.

Զա՜րկ, Կովկաս, ավերակյալ ու արցունքոտ Հայաստանին
աչքերը քեզի կը նային,
Զա՜րկ, թեև գիտեմ, որ քու սուրիդ վեհությունը պետք չէր արատավորել
Այդ անբաններու խուժանին թունավոր ու պժգալից արյունեն…
Զա՜րկ, թեև գիտեմ, որ հերոսները հերոսներու միայն կրնան ընդհարվի….

Ցեղի զորության հայտնություն է Սիամանթոյի պոեզիան, ցեղի գաղափարական անկումն ու ֆիզիկական չգոյությունը կանխող հզոր ուժ՝ խոսքային արվեստի փառահեղ կերտվածքներով: Դյուցազնորեն դիմագրավելու, դյուցազնորեն մեռնելու և հաղթելու գաղափարը գերակա է թե՛ առաջին, թե՛ երկրորդ գրքում. նաև այդտեղից բանաստեղծական շարքերի խորագրերը՝ «Դյուցազնորեն», «Հայորդիներ». ազգային կեցության խորհրդանշական ուղի և խորհրդանշային ներկայություն դարձած պատմական հերոսներ.

Ի՜նչ ոսկեղեն դարագլուխ է այս, և շղթաներու ի՜նչ զայրագին փշրտում.
Ի՜նչ ընդհարում ճակատ ճակատի, և հավատքի ի՜նչ հաղթանակ.
Ի՜նչ երկաթակուռ հարված բռնապետության անխախտելի օրենքներուն…

Հերոսամարտերում անմահացող սերունդը՝ «Եվ հարազատ և անպարտելի և անվեհեր զանգվածը մեր հինավուրց Ազգին», բարձրացրեց ցեղի արժանապատվությունը՝ իր փառակերտ ճակատը Արևմուտքի դիվանագիտության դեմ վառելով որպես ջահ, և անարդարությունն անգամ նրա ասպետական վարքի առջև «ամոթահար պարտվեցավ»,– գրում է բանաստեղծը. ➥ էջ 8

Արդարությունը

← էջ 5

Իր ամենատարբեր դրսևորումներով այն ներկայացնում է շահերի բախման բնութագրական իրավիճակ, քանի որ կապված է մեկ անձի կողմից մյուս(ներ)ի նկատմամբ հանդես բերվող կամընտրական բարեհաճության հետ, որտեղ մեկ անձի մասնավոր շարժառիթները գերիշխում են իր գործառույթներն իրականացնելու ընթացքում անկողմնակալ լինելու պարտականություններին: Այնինչ Աստվածաշունչը հստակ թելադրություն ունի. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն.... Սա է առաջին պատվիրանը: Իսկ երկրորդը սրան նման է. «Սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես»: Սրանցից ավելի մեծ պատվիրան չկա» (Մարկ. 12.30–31):

Լայն իմաստով՝ արդարությունն Աստծո վարձատրությունն է մարդկանց երկրային կյանքում կատարած իրենց գործերի դիմաց (Հոբ 1.1), բացարձակ իմաստով՝ աստվածային այն հատկությունը, որով մարդու նկատմամբ եղած Նրա վերջնական գնահատականն ամրագրվում է հավերժության մեջ (հմմտ. Սաղմ. 110.3, 119.137): Մարդկային սահմանափակ ըմբռնումով՝ անարդարացի կարող են համարվել ամենաստույգ, ամենապարզ ու ամենակատարյալ ճշմարտությունները, և արդարացի կամ արդարացված՝ անգամ արատներն ու ցածրոգի, զանազան այլ հանցագործությունները (հմմտ. Գ Թագ. 3.16–28, Առակ. 24.23): Այսպես՝ մարդիկ, քանի որ ճշմարտությունն իբրև ողորմություն չեն նկատում, այլ մեծ մասամբ դատում են ըստ արտաքին օրենքների ու գործողությունների, զուրկ են մնում կատարելությունից և հաճախ հիմնվում են սոսկ մարդկային նպատակադրումների վրա (հմմտ. Գ Թագ. 3.16–28, Սաղմ. 4.6, 30.24, Եփես. 4.25), որի համար Սուրբ Գիրքն ասում է. «Ամբարիշտների բռնությունը հասնելու է նրանց վրա, քանի որ հրաժարվեցին արդարադատություն անել» (Առակ. 21.7): «Դու մարդկանց չես խաբել, այլ Աստծուն»,– Անանիային հանդիմանում է Պողոս առաքյալը (հմմտ. Գործք 5.4–5,10): Բայց Աստծու պարագայում այդպես չէ (հմմտ. Սաղմ. 119.138, 142, Հովհ. 3. 16): Ի տարբերություն մարդկանց՝ Աստված միշտ սրատես է, գաղտնատես. «.... Որովհետև մարդը նայում է արտաքին տեսքին, իսկ Տերը նայում է սրտին (Ա Թագ. 16.7): Աստծու արդարությունն անհամեմատ ավելի ողորմած ու գթառատ է (Սաղմ. 10.7, 110.3, 119.137, Առակ. 21.3):

Իզուր չէ, որ խոսելով Աստծու էության կամ բնության մասին՝ սաղմոսերգուն «արդար» բառի փոխարեն գործածում է «դատավոր» բառը (հմմտ. Սաղմ. 74.8), իսկ մեկ այլ տեղում՝ «Քո աջը լի է արդարությամբ» (Սաղմ. 47.11): Հարկ է նշել, որ Պողոս առաքյալը «դատավոր» բառի համար հիմք է նկատում ոչ թե «դատելը», այլ «դատողությունը»՝ հավելելով. «Տերը հատուցում է յուրաքանչյուրին. և՛ նրանց, ովքեր համառորեն բարիք են փնտրում, և՛ նրանց, ովքեր անձնատուր են լինում անիրավության ու բարկության (Հռոմ. 2.6–8, հմմտ. Բ Տիմոթ. 4.6–8): Իսկ մեկ այլ դեպքում՝ «Ինչ որ աչքը չտեսավ, ու ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, այն Աստված պատրաստեց իրեն սիրողների համար» (Ա Կորնթ. 2.9):

Ս. Մատթեոս ավետարանիչը «Լեռան քարոզը» ներկայացնելիս (Մատթ. 5.3–12), նկատի ունենալով Տիրոջ ճշմարտության կատարելությունը (հմմտ. Սաղմ. 50.6, 117.19, 119.138), Նրա արդարության հավիտենականությունը (հմմտ. Սաղմ. 119.142), և որ ամեն բան ծառայում է Աստծու փառքին (հմմտ. Սաղմ. 118.91), ևս դիմում կամ հղում է անում մարգարեություններին (հմմտ. Սաղմ. 38.1–22), քանի որ արդարություն փնտրողի համար (Սաղմ. 131.9) դրանք միանգամայն ուսանելի (Հոբ. 14.4) և առաջնորդող են (Սաղմ. 7.18, 118.7), ինչպես որ Ինքը՝ Տերն է ուսուցանում. «Սովորեցե՛ք ինձնից, որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ» (Մատթ. 11.29):

Բացի վերոհիշյալից՝ հարկ է գիտենալ, որ Արարիչը մարդուն օժտել է ազատ կամքով՝ ընտրելու բարին ու չարը, և միայն նրա ինքնորոշումից հետո է, որ բացահայտում է Իր արդարությունը, ինչպես որ տեսնում ենք «Սերմնացանի առակում» և հետևող մեկնաբանության մեջ. «Ահա սերմնացանը ելավ սերմանելու: Երբ նա սերմանում էր, մի քանի սերմնահատիկ ճանապարհի եզերքին ընկան, և երկնքի թռչունները եկան ու դրանք կերան: Իսկ ուրիշները քարքարոտ տեղ ընկան, որտեղ շատ հող չկար, և իսկույն բուսնեցին հողի սակավության պատճառով: Բայց երբ արևը ծագեց, վառվեցին և որովհետև արմատ չունեին, չորացան: Ուրիշները փշերի մեջ ընկան, և փշերը բարձրացան ու դրանց խեղդեցին: Իսկ ուրիշներն էլ բարեբեր հողի վրա ընկան ու պտուղ տվեցին. մեկը՝ հարյուրապատիկ, մեկը՝ վաթսունապատիկ, և մեկը՝ երեսնապատիկ: Ով լսելու ականջ ունի, թող լսի.... Ամեն ոք, ով լսում է արքայության խոսքը, բայց չի հասկանում, գալիս է չարը և հափշտակում նրա սրտի մեջ սերմանվածը. ճանապարհի եզերքին սերմանվածը սա է: Քարքարոտ վայրում սերմանվածը նա է, ով խոսքը լսելիս իսկույն ուրախությամբ ընդունում է այն, բայց քանի որ իր մեջ արմատ չունի, այլ ժամանակավոր է, ապա երբ այդ խոսքի պատճառով նեղություն կամ հալածանք է լինում, իսկույն գայթակղվում է: Փշերի մեջ սերմանվածը նա է, ով լսում է խոսքը, բայց այս աշխարհի հոգսերն ու հարստության պատրանքները խեղդում են այդ խոսքը, և այն անպտուղ է լինում: Իսկ բարեբեր հողի մեջ սերմանվածը նա է, ով լսում է խոսքը և հասկանում ու պտուղ է տալիս.... Հիսուսը նրանց մեկ այլ առակ էլ պատմեց ու ասաց. «Երկնքի արքայությունը նման է մի մարդու, որն իր արտում լավ սերմ ցանեց: Երբ մարդիկ քնած էին, նրա թշնամին եկավ և ցորենի մեջ որոմ ցանեց ու գնաց: Երբ խոտը բուսնեց ու պտուղ տվեց, երևաց նաև որոմը: Տանտիրոջ ծառաները մոտեցան նրան և ասացին. «Տե՛ր, չէ՞ որ արտիդ մեջ լավ սերմ ցանեցիր: Ուրեմն այդ որոմը որտեղի՞ց է»: Իսկ նա ասաց նրանց. «Թշնամի մարդն է դա արել»: Ծառաները նրան ասացին. «Հիմա ուզո՞ւմ ես՝ գնանք, դրանք քաղհանենք»: Նա ասաց. «Ո՛չ, որոմը քաղելիս միգուցե ցորենն էլ դրանց հետ արմատախիլ անեք: Թողե՛ք, որ մինչև հունձքը երկուսը միասին աճեն, և հունձքի ժամանակ հնձողներին կասեմ. «Նախ որո՛մը քաղեք ու խրձե՛ր կապեք այրելու համար, իսկ ցորենը հավաքե՛ք իմ շտեմարանի մեջ»» (Մատթ. 13. 4–9, 19–30):

Ինչպես նաև մարդու մեջ կա «բնական դատարան», որով նա տարբերում է բարին ու չարը (ոմանք այն խիղճ են բնորոշում, ոմանք՝ Աստծու ձայնը կամ պատկերը, ոմանք՝ այլ կերպ): Օրինակ՝ երբ «մարդու դատարանում» քննվում են արատներն ու առաքինությունները, ցանկությունները հաճախ հակվում են դեպի մեղքը, բայց Աստծու նկատմամբ երկյուղը հիշեցնում ու նպատակաուղղում է դեպի առաքինությունները: Ուրիշ խոսքով՝ արդարություն է նաև մարդու կողմից իր մեղքի ճանաչումն ու այլոց անմեղության գիտակցումը, որի վկայությունը դարձյալ տեսնում ենք Ավետարանում. «Եվ կախված այն չարագործներից մեկը նրան հայհոյում էր ու ասում. «Դու չե՞ս Քրիստոսը. փրկի՛ր ինքդ քեզ և մեզ»: Իսկ մյուսը պատասխանեց՝ նրան հանդիմանելով, ու ասաց. «Աստծուց չե՞ս վախենում, դու, որ նույն պատիժն ես կրում: Մեզ համար արդարացի է, քանզի արժանի հատուցումն ենք ստանում մեր կատարած գործերի համար, իսկ սա ոչ մի վատ բան չի արել»: Եվ Հիսուսին ասաց. «Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ քո թագավորությամբ գաս»: Եվ Հիսուսը նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ. դու այսօր ինձ հետ դրախտում կլինես»: (Ղուկ. 23.39–41):

Հետևապես, երբ «բողոքն» անարդար է, դառնում է զրպարտություն, ինչպես մեկնաբանում է Ս. Գրիգոր Աստվածաբանը, իսկ մարդը մխիթարություն է ապրում արդարության որևէ դրսևորումից (հմմտ. Մարկ. 3.5), անկախ նրանից, թե այն իր հետ ի՞նչ առնչություն ունի, որովհետև արդարության ամեն մի երևան գալու մեջ Տիրոջ իմաստությունը, մաքրագործումն ու փրկագնումը կան (հմմտ. Ա Կորնթ. 1.30), նաև՝ հավատարմություն և հույս (Սաղմ. 118.121), իսկ «օրենքի լրումը սերն է» (Եփես. 4.26), ոչ թե վրեժխնդրությունը կամ բարկությունը (հմմտ. Սաղ. 4.4): Եվ ուրեմն՝ որևէ կացութաձևի հաստատուն լինելու գրավականը արդարությունն ու հավատարմությունն են, քանի որ այսկերպ մարդը մոտենում և նմանվում է Աստծուն (հմմտ. Ելք 34.6, Բ Օր. 7. 9): Ըստ այսմ՝ «Աշխարհի որևէ վայրում տեղի ունեցող անարդարությունը սպառնալիք է համընդհանուր արդարությանը» (Մ. Լ. Քինգ):

Առաջին քրիստոնյաները ևս հայտնի էին իբրև բարին նախընտրողներ (հմմտ. Ա Կորնթ. 10. 27) կամ «բարոյական» սրբեր (հմմտ. Բ Կորնթ. 6.15): Հայտնի է, որ արդարությունն ու հավատարմությունն առաջին անգամ բացահայտվում են հենց Արարչի առնչությամբ, հետայնու Տիրոջ հանդեպ առկա անվերապահ վստահության, ինչպես նաև «Օրենսդրի» նկատմամբ ու կամավոր ստանձնած բարոյական պարտավորությունների առիթով (հմմտ. Սաղմ. 30.6), սակայն առկա օրինակները բազում են (հմմտ. Եբր. 2. 17): Ըստ այսմ՝ արդարությունն ու ճշմարտությունն ամբողջությամբ ճանաչելը միայն Աստծուն է հատուկ, իսկ ով դիմացինի մասին զրպարտությամբ է խոսում, ինքն էլ զերծ չի մնալու դատապարտությունից, որովհետև իրեն բարձր տեսնելով և այլոց վերից նայելով՝ չի հասցնում նկատել սեփական թերացումներն ու զանցումները: Եվ ակնհայտորեն ենթարկվելով կրքերին ու ցանկություններին, չկարողանալով խոհեմ կառավարել՝ կամա-ակամա ապականում է Աստծու կողմից իբրև պարգև տրված կյանքը: Դրա համար էլ Սուրբ Գիրքն ասում է. «Ամեն մարդ թող աշխույժ և ուշադիր լինի լսելու մեջ և դանդաղ՝ խոսելու և բարկության մեջ, որովհետև մարդու բարկությունն Աստծու արդարությունը չի անում» (հմմտ. Հակ. 1. 19–20), ինչպես նաև՝ «Ամեն դառնություն, բարկություն, աղաղակ ու հայհոյանք թող վերանան ձեզանից....» (հմմտ. Եփես. 4.31):

Գյուստավ Դորե. Սողոմոնի դատը, 1865 թ.

Հատկանշելի է, որ Հին Կտակարանի մտածողության մեջ մի շարք արատներ, այդ թվում՝ անարդարությունը, նախևառաջ անհատական զգացմունք է և առանձին մարդկանց վարքագծի արտահայտություն: Այստեղ անգամ իբրև հանցագործություն ընկալվող վարքագիծը, եթե առանձնահատկություն ունի կամ «համապատասխանում է Աստծու կամքին», հստակորեն տարբերակվում է և կարող է անգամ արդարացվել: Սակայն Նոր Կտակարանում պատկերը միանգամայն որոշակի է. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել.... Չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային» (հմմտ. Մատթ. 6:24): Բացի դրանից՝ Նոր Կտակարանի ողջ փիլիսոփայությունը հավաստում է, որ մեր վերջնական քաղաքացիությունը երկնային է. «Դուք ինչպե՞ս կարող եք հավատալ, քանի որ իրարից եք փառք առնում և չեք որոնում այն փառքը, որ միակ Աստծուց է գալիս» (Հովհ. 5.44): Ընդսմին Աստծու պատվիրանները չարամտորեն պահելն օրինազանցություն է, իսկ հակառակության ոգու հետ համատեղելը՝ հերետիկոսություն. «Դո՛ւք եք երկրի աղը. սակայն եթե աղը անհամանա, ինչո՞վ այն կաղվի. այնուհետև ոչ մի բանի պիտանի չի լինի, այլ միայն դուրս կթափվի և մարդկանց ոտքի կոխան կլինի: Դո՛ւք եք աշխարհի լույսը. մի քաղաք, որ լեռան վրա է կանգնած, չի կարող թաքնվել: Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ» (Մատթ. 5. 13–15): «Մի՛ խաբվեք. վատ խոսքերը ապականում են լավ բարքերը: Սթափվեցե՛ք արդար մարդկանց նման և մեղք մի՛ գործեք. որովհետև ոմանք չունեն Աստծու ճանաչումը....» (Ա Կորնթ. 15.33–34),– հորդորում է Պողոս առաքյալը: Ուստիև, ինչպես դարձյալ համոզվում ենք, անթույլատրելի է կեղծավորաբար ու ինքնաարդարանալով կամ ինքն իրեն ներում շնորհելով՝ այլոց դատապարտության մատնելը (հմմտ. Սաղմ. 140.4): Միաժամանակ փաստելի է, որ «որտեղ կա հավասարություն, այնտեղ չի կարող լինել խաղաղություն, լինի դա ժողովրդավարություն թե միաժամանակյա ղեկավարում» (Հ. Ոսկեբերան), ինչպես նաև եթե մի ընդհանրության մեջ հանուրի շահերը ներկայացնելու կոչված որևէ անձ կարող է շարունակական կերպով կասկածի տակ առնել սեփական սրբությունները ու անպատիժ մնալ, հոգևոր դիտակետից նշանակում է՝ տվյալ հանրությունը տառապում է «հավաքական հաշմանդամությամբ»:

Այս առումով բավական ուշագրավ են Ընհանրական Եկեղեցու սուրբ հայրերից Դիոնիսիոս Արիոպագացու և Հովհան Ոսկեբերանի դիտարկումները: Այսպես՝ մարդուն արարելիս Աստված ի սկզբանե նվիրաբերեց բնական օրենքը: Ի՞նչ է բնական օրենքը. Աստված դրոշմել է մեր մեջ խիղճը և բարու ու չարի ճանաչողությունը դարձրել բնածին: Կարիք չկա ուսանելու, որ պառնկությունը չարիք է, իսկ մաքրագործությունը՝ բարիք: Մենք դա գիտենք ի սկզբանե: «Համոզվելու համար՝ օրենսդիրը հետագայում օրենքներ տվեց և ասաց. «Մի՛ սպանի՛ր» (Ելք 20. 13), հավելացրեց, որ սպանությունը չարիք է, այլ պարզապես ասաց՝ «Մի՛ սպանի՛ր»: Միայն մեղքն արգելեց և այլևս չուսուցանեց դրա մասին: Քանի որ խիղճը մեզ նախապես սովորեցրել է այդ: Բայց երբ խոսում է մեկ այլ պատվիրանի մասին, որը մեզ բացահայտված չէ խղճով, ապա ոչ միայն արգելում է, այլև հիմնավորումն է տալիս: Ուստի, օրենք դնելով շաբաթ օրվա համար և ասելով՝ «յոթերորդ օրը ոչինչ մի՛ արեք», հավելում է և պատճառը. «Աստված յոթերորդ օրը հանգստացավ իր բոլոր գործերից, որոնք նա արեց» (հմմտ. Ծնն. 2. 22, Ելք 20. 10–11, Բ Օր. 24.18):

Արդարության ամենամեծ հաղթանակը տեղի կունենա Վերջին դատաստանի ժամանակ, երբ Տերը կհատուցի յուրաքանչյուրին ըստ իր գործերի. «Հավիտենական կյանք է տալու նրանց, ովքեր, բարի գործերի մեջ հարատևելով, փառք, պատիվ և անմահություն են փնտրում, իսկ բարկություն և վրդովմունք՝ նրանց, ովքեր հակառակվում են, չեն հնազանդվում ճշմարտությանը և անիրավության հետևից են գնում....» (Հռոմ. 2.6–8):

Իսահակ վրդ. ՊՈՂՈՍՅԱՆ

Աստուծոյ Օրէնքներուն եւ պատուիրաններուն մասին

↩ էջ 6

Հինգերորդ՝ դրախտին մէջ դնել զինք [մարդուն] պահպանելու եւ վայելելու համար:

Վեցերորդ՝ մեղանչելէն ետք չպատժելը:

Եօթներորդ՝ զանազան ձրի շնորհքներով զարդարելը:

Ութերորդ եւ ծայրագոյնը՝ ժամանակին Իր Միածին Որդին ղրկելը, Անոր մարմին առնելը եւ մեզի համար բոլոր տնօրէնութիւնները կատարելը մինչև խաչ ու չարչարանքներ: Ասոնք մեծամեծ եւ մտածելի բարերարութիւններ են, որոնք մարդս կը մղեն զԱստուած սիրելու ամբողջ սիրտով, քանի որ ո՛չ ոք կրնայ զԱստուած ամբողջ սիրտով սիրել, երբ իր սիրտը բաժնած է աշխարհին եւ Աստուծոյ միջև, ինչպէս կ'ըսէ Ս. Յովհան Ոսկեբերանը:

Դարձեալ՝ Աստուծոյ բարութիւնն ու քաղցրութիւնը մեզ կը մղեն սիրելու զԻնք, քանի որ եթէ ծնողները սիրելի ու պատուելի են միայն մարմին տալուն համար, ապա ինչքա՜ն սիրելի է Աստուած, որ մարմինն ու հոգին ստեղծեց:

Դարձեալ՝ ան է աւելի շատ սիրելի, ով աւելի կը դիւրացնէ, իսկ Աստուծոյ մօտ կը գտնուի ամենալի, անտաղտուկ եւ համեստ դիւրութիւնը, որ բոլոր դիւրութիւններուն վախճանն ու ծայրն է, հետևաբար աւելի սիրելի է:

Դարձեալ՝ ինչպէս բոլոր ջուրերը ծովէն կ'ելլեն եւ ծով կը վերադառնան, այդպէս ալ մեր սիրոյն պատճառն ու նախագաղափարը Աստուած է, հետևաբար դէպի Ան պէտք է դառնայ իբրև սիրոյ սկիզբն ու աղբիւրը: Ուստի Սուրբ Յովհաննէս աւետարանիչը ըսաւ, թէ՝ զԱստուած սիրեցէք, որովհետև նախ Ա՛ն սիրեց մեզ եւ Իր Միածին Որդին՝ Փրկիչ Յիսուսը ղրկեց:

Դարձեալ՝ բոլոր օրէնսդիրներուն մէջ միայն Աստուած անսխալելի Օրէնսդիր է, որ օրէնքը տուած ատեն շնորհքն ալ որպէս օգնական տուաւ եւ կատարողներուն փառք խոստացաւ: Ուստի Քրիստոս՝ մեր Օրէնսդիրը, ըսաւ, թէ՝ ով որ պատուիրաններս ունի եւ կը պահէ զանոնք, ա՛ն է, որ զիս կը սիրէ, իսկ ով, որ կը սիրէ զիս, Հօրմէս պիտի սիրուի, եւ ես պիտի սիրեմ զինք ու Ինքզինքս ցոյց պիտի տամ անոր: Արդ, ըսելով, թէ՝ ով որ պատուիրաններս ունի, ցոյց կու տայ օրէնքին ու Օրէնսդիրին անսխալութիւնը: Իսկ ըսելով, թէ՝ ով որ կը պահէ զանոնք, ա՛ն է, որ կը սիրէ զիս, ցոյց կու տայ Իր շնորհքներուն օգնականութիւնը, քանի որ առանց շնորհքներու ո՛չ ոք կրնայ Քրիստոսի օրէնքները պահել եւ սիրել զԻնք: Իսկ ըսելով, թէ՝ Իմ Հայրս պիտի սիրէ զինք, եւ ես ալ պիտի սիրեմ ու Ինքզինքս պիտի յայտնեմ անոր, ցոյց կու տայ հանդերձեալ կեանքին փառքը:

Դարձեալ՝ զԱստուած սիրողներուն նշանը, ինչպէս առաքեալը կ'ըսէ, ամէն ինչի մէջ բարիին գործակից ըլլալն է, որովհետև ո՛չ ոք, մահացու մեղքերու մէջ ըլլալով, կրնայ զԱստուած սիրել ամբողջ սիրտով ու բարիին գործակից ըլլալ, այլ պէտք է հոգին դատարկէ մեղքերէն, որպէսզի Աստուծոյ սիրով լեցուի:

Դարձեալ՝ զԱստուած սիրողը Աստուծոյ՝ իր Սիրելիին համար կը համբերէ ու կը տանի բոլոր վիշտերը, որովհետև Աբրահամ Աստուծոյ համար իր որդին իսկ չխնայեց. Յոբ երանելին այնքա՛ն սարսափելի նեղութիւններու համբերեց [Աստուծոյ համար]. իսկ առաքեալները եւ բոլոր սուրբ մարտիրոսները իրենց արիւնը թափեցին Աստուծոյ համար: Քանի որ Աստուծոյ սէրը բնութենէն գեր ի վեր կ'առնէ մարդուն յօժարութիւնը, որովհետև գերազանց սիրոյ զօրութիւնը մոռցնել կու տայ տկարութիւնը:

Ի վերջոյ, զԱստուած սիրելու կերպը սիրելն է զԻնք առանց կերպի՝ ամէն ինչ վերաբերելով Աստուծոյ փառքին:

Աստուծմէ բացի՝ ինչ որ սիրես, կը զզուիս եւ շա՛տ կը ձանձրանաս.

իսկ եթէ միայն զԱստուած սիրես, ինչքա՛ն սիրես, կը քաղցրանաս:

Տասներորդ հարցում. *Ընկերը սիրելու մասին:*

Ընկերը սիրելու հրամանը այս է. պիտի սիրես քու ընկերդ՝ իբրև քու անձդ:

Աստուծմէ եւ մեր հոգիէն ու մարմինէն ետք սիրելիներ են մեր ընկերները, որովհետև այս *իբրևը* ո՛չ թէ հաւասարութեան անուն է, այլ նմանութեան, որ կ'ուզէ ըսել, թէ՝ քու անձիդ պէս. իսկ նմանը նոյնէն պակաս է. քանի որ ամբողջութեամբ նմանը նոյն է, սակայն ո՛չ ոք կրնայ ամբողջութեամբ սիրել ընկերը այնքան, որ իր հետ նո՛յնը ըլլայ:

Արդ, ընկերը սիրելի է Աստուծմէ եւ մեր հոգիէն ետք, այլ ո՛չ թէ մեր մարմինէն ետք, որ մեր մարմինը սիրելով՝ ընկերոջ հոգիին վնաս կը պատճառենք. սակայն ընկերոջ հոգիին փրկութեան համար պարտական ենք մեր մարմինը չխնայել: Որովհետև ըստ առաքեալին՝ Քրիստոս Իր անձը մեզի համար դրաւ, եւ մենք պարտաւոր ենք մեր անձերը դնել մեր եղբայրներուն համար:

Պօղոս թէեւ զԱստուած շատ կը սիրէր եւ գիտէր, թէ երբ աշխարհէն ելլէ, Աստուծոյ մօտ պիտի մտնէ, սակայն իր ազգին փրկութեան սիրոյն կը կամենար Քրիստոսէ նզովուիլ, այսինքն՝ որոշ ժամանակ մը մնալ այս աշխարհին մէջ, մինչև տեսնէր հրեաներուն դարձը առ Աստուած:

Արդ, բազմաթիւ բաներ կը յորդորեն մեզի մեր ընկերը սիրել:

Նախ՝ բնութիւնը, որովհետև նմանը իր նմանը կը սիրէ:

Երկրորդ՝ օգնականութիւնը, ինչպէս Պօղոս կ'ըսէ, թէ իրարու բեռը վերցուցէք:

Երրորդ՝ եղբայրութիւնը, որ բոլորս ալ մէկ Ադամի որդիներն ենք, իսկ Սուրբ Աւազանով Աստուծոյ որդիներ եւ իրարու եղբայրներ:

Չորրորդ՝ մէկ մօր համար, որ է Սուրբ Եկեղեցին:

Հինգերորդ՝ մէկ հաւատքի շուրջ միաբանութեան, մէկ Աստուծոյ եւ մէկ մկրտութեան:

Վեցերորդ՝ մէկ փառքի համար, որ է Աստուծոյ տեսութիւնը:

Եօթներորդ՝ մարդասպանութենէ ազատուելու համար, որովհետև ով, որ իր եղբայրը չի՛ սիրեր, մարդասպան է, կ'ըսէ Ս. Յովհաննէս աւետարանիչը:

Ութերորդ՝ մեղքերէ ազատուելու համար, քանի որ ով իր եղբայրը չի՛ սիրեր, տակաւին նոյն մեղքերուն մէջ է, կ'ըսէ նոյն աւետարանիչը:

Իններորդ՝ Քրիստոսի նմանութեան համար, որովհետև ինչպէս Ան մեզ սիրեց, նմանապէս մենք պէտք է մեր եղբայրներն ու ընկերները հոգևոր սիրով սիրենք:

Տասներորդ՝ մեղքերէն դարձնելու եւ Աստուծոյ շնորհքներուն մօտեցնելու համար. այս է կատարեալ եղբայրական սէրը, եւ այս կը սորվինք հրեշտակներէն, որոնք միշտ կը կամենան մեր մեղքերէն դարձը:

Իսկ ան, որ իր ընկերը կը սիրէ, բազմաթիւ բարութիւններու կը հանդիպի:

Նախ՝ կը յաղթէ թշնամիին, որովհետև եթէ մէկը բռնուի, երկուքը կրնան դէմ կենալ, հակառակիլ, կ'ըսէ Սողոմոնը:

Երկրորդ՝ քանի որ իր պակասութիւնը ընկերոջ բարիքներով կը լեցուի, ինչպէս կ'ըսէ վարդապետ մը, թէ՝ վերցուր նախանձդ, եւ քունկդ է, ինչ որ ունիմ. վերցնեմ նախանձս, եւ իմս է, ինչ որ ունիս:

Երրորդ՝ խնդրածներու կատարումը. որովհետև եթէ երկրի վրայ երկու հոգի միաբան ըլլան, Աստուծմէ կ'առնեն ինչ բարի բան, որ կը խնդրեն:

Եթէ եղբայրները զիրար սիրեն, որ մարդէ մը ծնած են.

հոգիով եղբայրները պէտք է սիրել, որովհետև Աստուծոյ որդիներ են:

Յակոբ Պատրիարք Նալեան.
«Քրիստոնէական Ուսանելի»,
1806

Աշխարհաբարի վերածեց
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ

Հայորդու բարոյատիպը Ատոմ Յարճանյանի ռազմերգության մեջ

↩ էջ 4, 6

Օ՜, փառք քեզի և փառք շանթարմատ հպարտությանը քու լեռներուդ,
Կարծես անոնց ապառաժներուն հավիտենական
տարրերեն են կառուցված՝
Անպարտելի հասակները քու սևահեր ու հրաչվի որդիներուդ,
Քու անտառներուդ ահագնաթափ փոթորիկը գիշերական…
Անոնց զինվորյալի կուրծքերուն մեջ իր հսկայական հևքը դրավ…

Սիամանթոյի ռազմերգությանը ներհատուկ հատկանիշներից է սքանչացումը հայորդու պայքարի հանդեպ: Ասպետի կերպարը նրա պոեզիայում հոգեբանական գաղափարատիպ է՝ օժտված իր ցեղի նախնական հոգեգծերով: Դարերի ստրկության մեջ իր նախաստեղծ դիմագիծը կորցնելու չափ խեղճացած ժողովրդի հոգեբանությանը հայորդու վարքը վերադարձրեց ցեղական կորովը, շանթակիր տարերքը, գերհզոր կամքն ու անկարելիության աստիճանի ներքին զորությունը: Սիամանթոյի հայորդին իր ցեղի զտարյուն տեսակն է, ցեղի ուժակիրն ու բարոյատիպը.

Ձեր աստվածացումը օրհներգելով պիտի երիվարեն, ահավասիկ,
Ո՜վ գիտե, դեպի որ հաղթանակները կամ դեպի որ պարտությունները փառավոր:

Սիամանթոն որքան հայրենապաշտ, նույնքան էլ արիապաշտ բանաստեղծ է: Ազգային գոյաբանության ոգորումների ճանապարհին հասունացած բանաստեղծի ռազմերգությունը նախակամավորական շարժման շրջանում մրրկեց հոգիներ, պողպատեց կամքեր, ձևավորեց դյուցազնատիպ մի սերունդ, որ ազգային աննախադեպ կորուստների ու ողբերգությունների կողքին կերտեց անօրինակ հերոսացումների փառահեղ դյուցազնավեպեր:

«Ես երգելով կուզեմ մեռնիլ» բանաստեղծության մեջ քերթողն ու ռազմիկը խորհրդանշում են գաղափարն ու կամքը, ոգին և ուժը: Ընդհանուր են հոգու խռովքը, սխրագործելու գիտակցությունը, նպատակը կերտելու կամքը: Հայ ռազմիկի աստվածակերպ կերտվածքը ոգեղենացնող է: Պահը խորհրդավոր է. հայրենիքի համար գերագույն պարտավորություն ունեն թե՛ բանաստեղծը, թե՛ ռազմիկը.

Եվ դուն սա մաքրափայլ թերթերուդ վրան, ցեղին ցավը և ցեղին ուժը բանաստեղծե…
Ես որբ մըն եմ և ըմբոստ մը, մնաս բարյավ, կորուսյալներս փնտրելու կերթամ…
Քու երգերեդ երգ մը տուր ինձ, երգ մը, ես երգելով կուզեմ մեռնիլ…

Խորհրդապաշտության սահմանին հասնող հիացմունքը, ցավախառն ցասումը, բարձր բարոյականը, խռովահույզ ապրումների գիշերվա մեջ հայտնված ռազմիկի կիսաստվածային կերպարանքը հաստատում են կյանքի դյուցազնորենը.

Սպասումիս և Հույսիս քաղցրությանը հետ, մինակ էի այդ իրիկուն,
Եվ Փրկության ու Տառապանքի նժարովը՝ Հայրենիքին բախտը կը կշռեի…
Երբ հեռակա տանս դուռը, գիշերվան սարսափին մեջեն, ուժգնապես բախեցին.
Եվ ժպտում՝ ընկեր մը ներս մտավ, շքեղորեն գեղեցիկ, եղբայրադեմ ու ահավոր…
Երիտասարդ էր: Աչվներուն կայծը, երկնքի աստղերեն էր, որ կը ծորեր,
Եվ հասակին ձևերը մարմարներու զորություններեն էր կերտված…
Իր ծանրախոհ գլուխը սգավոր կիսաստվածի մը արյունոտ սրտին կը նմաներ….

Սիամանթոյի ռազմերգությունը հաստատում է ազգային անընդմեջ ողբերգություններով սրբագրված կյանքի օրենքը. «Ցավը արցունքով չէ որ կանհետի»: «Հույսով զեղուն, արևով խենթ և անուրջով երջանիկ» բանաստեղծի կյանքի գերնպատակը հայրենիքի գոյաբանությունն է. «Ինձի համար կարելի չէ… Հայրենիքիս մահացումը»՝ այդ ճանապարհին հաղթահարելով կամքի բոլոր թուլությունները, բարոյապես զոհելով երկրային կարոտները. «Նպատակս տկարություն չի ճանչնար»: Սիամանթոն հայդուկային շարժման ժամանակակիցն է, գաղափարակիրը «Մահ կամ ազատություն» նշանաբանի.

Արարատին փառքերեն, Արագածեն ալ անդին,
Մենք արևներ պիտի հագնինք և արյուններ…

Այսպիսի կենարար լույսով են պսակվում բանաստեղծի ռազմերգերը: Հույսը մշտապես ճառագում է նպատակի վերջնակետում, հույսն անժխտելի է, ինչպես ցայգին հաջորդող արևագալը. «Հայ զինվորին պղինձե շեփորը պիտի պատռի հաղթանակի Ռազմերգին որոտումեն…»:

Մաքառումի և անկշռելի ցավի մատյան է Սիամանթոյի քերթությունը: Հզոր երևակայությունը, բանաստեղծական անսանձ տարերքը, խոսքի գաղափարաբանական ներքին կշիռը բանաստեղծական աշխարհում հաստատեցին պոետական նոր դիմագիծ: Գեղարվեստական մտածողության որոշակի հատկանիշներ, գերազանցապես մտապատկերների առկայությունը, պատկերների հյուսքը, վերացական ոգին նկատի ունենալով՝ քննադատությունը Սիամանթոյին դասել է խորհրդապաշտների շարքին. «Վեռլենի, Բոդլերի, Մալարմեի հայրենիքում նա չի կարող չենթարկվել այս սիմվոլիստ-դեկադենտների ազդեցությանը»,— դիտարկում է Վ. Նալբանդյանը՝ ստեղծագործական ակունքների հետ մատնանշելով Սիամանթոյի արվեստի խորհրդապաշտական ոգին: Խորհրդապաշտական հայեցողության ազդեցությամբ հանդերձ՝ խորհրդապաշտությունը Սիամանթոյի պոեզիայում գեղագիտական տիրական աշխարհայացք չդարձավ. «Անխառնորեն ռոմանթիկ է,— նկատում է Ա. Չոպանյանը,— իրմե ավելի ռոմանթիկ բանաստեղծ չենք ունեցած, նույնիսկ անոնց մեջ, որ պատմականորեն «ռոմանթիկ» կոչված շրջանի մեջ ապրած են»: Ստեղծագործական երեք մեթոդ՝ խորհրդապաշտությունը, գաղափարապաշտությունը և իրապաշտությունը, Յարճանյանի ժողովածուներում դրսևորվել են փոխներթափանցաբար՝ երբեմն տիրական դառնալով այս կամ այն չափով: «Վրեժի մարտագոռ շեփորող և տառապանքի խելահեղ բանդագուշող» (Դ. Վարուժան),— այս տարերքի հակակշիռ ուժի մեջ է Սիամանթոյի արվեստի հզորությունը:

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, բ. գ. թ., դոցենտ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 15.05.2025 թ.
Տպաքանակը՝ 1265